AZG NEW PDF.qxd 02/06/2010 22:29 Page 1


# Ազգ
Azg

3 ՅՈՒՆԻՍ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 101 (4481)

ISSN: 1829-1651


## Ցստղ օգնության 88 մեքենա Չինաստանից

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ երեկ ստորագրվեց տեխնիկական-տնտեսական համագործակցության համաձայնագիր: Ըստ համաձայնագրի, Չինաստանի կառավարությունը Հայաստանի կառավարությանն է տրամադրում 20 միլիոն չինական յուանի չափով անհատույց օգնություն: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Չինաստանը Հայաստանին հասկացրել է ցստղ օգնության 88 մեքենա:

Ա. Ս.

## Թուրք-իսրայելական տարաձայնությունները վերաճել են հակասության

### *Սակայն Գազայի բնակչության համար կարեւորը շրջափակման վերացումն է*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Թուրքիա-Իսրայել հերթական ճգնաժամն աշխարհի ուշադրության կենտրոնում է: Պատճառը մայիսի 31-ին դեպի Գազա մարդասիրական օգնություն՝ մասնավորապես ցեմենտ, շինանյութ, պողպատե ամրաններ տանող «Ազատության նավատորմիղի» վրա իսրայելցիների հարձակումն է, որն իրականացվել է միջազգային ջրերում: Հարձակման հետեւանքով առնվազն 10 ուղեւոր զոհվել է, ավելի քան 30-ը՝ վիրավորվել: Ի դեպ, նավատորմիղի շուրջ 680 ուղեւորներից 358-ը թուրքեր են, որոնցից 4-ը եւս, ըստ նախնական տվյալների, սպանվածների թվում է:

Սպանվածների ստույգ թիվը հայտնի չէ, պարզապես գիտենք, որ սպանությունները կատարվել են թուրքական «Մավի Մարմարա» նավի վրա, ուղեւորներն ու «Ազատության նավատորմիղը»՝ կալանվել: Ինչպես եւ ենթադրելի էր, Թուրքիան բուռն հակազդեցություն ցուցաբերեց հարձակմանը, թերեւս ամենախիստ արտահայտություններով: Արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հարձակումն անվանեց «ավազակություն եւ ծովահենություն», վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ասաց, որ դա պետական ահաբեկչություն է, սպառնալով. «Թող ոչ ոք չփորձի մեր համբերությունը: Թուրքիայի պես գործընկեր կորցնելն արդեն մեծ պատիժ է»:

Սակայն որքան էլ Դավութօղլուն ամենախիստ արտահայտություններ հասցեագրի Իսրայելին, նրա ակտիվ մասնակցությամբ հրավիրված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստը հարձակման համար ընդամենը դատապարտեց Իսրայելին եւ պահանջեց նավատորմիղի կալանման անկախ քննություն անցկացնել, այլ ոչ թե պատժամիջոցների կիրառման հարց բարձրացնել: Ինչ վերաբերում է Էրդողանին, ապա նրան էլ պատասխանեց Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն, թե զինվորականները դիմել են ինքնապաշտպանության, եւ ինքը հավանություն է տալիս նավատորմիղի դեմ ձեռնարկված ռազմական գործողությանը:

*Տես էջ 8*

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՌՈՍՏՈՎՈՒՄ

## Թուրքիան ԼՂ հարցում ակնհայտորեն անելիք չունի

Աշխատանքային այցով Դոնի Ռոստովում գտնվող նախագահ Սերժ Սարգսյանը երեկ այցելել է տեղի Հայ առաքելական Սուրբ Համբարձում եկեղեցի, պատմաազգագրական թանգարան, ինչպես նաեւ հարգանքի տուրք մատուցել Մեծ հայրենականին մասնակցած Մյասնիկյանի շրջանի հայ զինվորների հիշատակին:

Ըստ պաշտոնական տեղեկատվության, նախագահ Սարգսյանը հանդիպումներ է ունեցել նաեւ Ռոստովի մարզի ղեկավարության եւ ՌԴ հարավային դաշնային շրջանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:



Հայ համայնքի հետ հանդիպմանը Հայաստանի նախագահը նշել է հայ-ռուսական ավանդական հարաբերություններում Ռոստովի հայերի հարուստ ավանդույթը շարունակելու կարեւորության մասին:

Խոսելով Հայաստանի ներկա քաղաքական ու տնտեսական վիճակի մասին, Սերժ Սարգսյանն անդրադարձել է հայ-թուրքական գործընթացին ու արձանագրությունների սառեցմանը: Նախագահը նշել է, որ դրա պատճառը Թուրքիայի անպատրաստությունն է վավերացնելու արձանագրությունները: «Դրա տապալումն արդարացնելու նպատակով նա նորանոր նախապայմաններ է առաջ քաշում: Ավելին՝ նա փորձում է ներխուժել մի ոլորտ, ես նկատի ունեմ Արցախյան հարցի լուծման գործընթացը, որտեղ ակնհայտորեն անելիք չունի», նշել է Սարգսյանը:

Նախագահի խոսքերով՝ «Ոչ հուսալի եւ անվստահելի գործընկերոջ հետ, որը պարբերաբար խախտում է նախնական պայմանավորվածությունները, մենք ներկա պահին խոսելիք չունենք... Ժամանակը ցույց տվեց, որ Եվրոպայի վերջին փակ սահմանը բացելու համար մենք մեր կողմից արեցինք առավելագույնը, իսկ Թուրքիան պատրաստ չէ դրան: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի խնդրին, ապա մենք աներկբա հնչեցրել ենք, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը մենք չենք պատրաստվում սակարկել որեւէ մեկի հետ»:

Ա. Հ.

## Գերագույն հոգեւոր խորհուրդը հորդորում է կառավարությանը

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի նախագահությամբ գումարված Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում հոգեւորականներն անդրադարձել են օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներ հիմնելու օրենսդրական նախաձեռնությանը:

Ինչպես տեղեկացնում են Մայր աթոռի մամլո դիվանից, Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշել է հորդորով դիմել ՀՀ կառավարությանը՝ «առավել գործուն քայլեր ձեռնարկելու գործընթացի հետ կապված խնդիրները շահագրգիռ անձանց եւ կազմակերպությունների հետ քննարկելու եւ մոտեցումներն առավել հստակեցնելու համար»:

Ստեղծվել է հանձնաժողով՝ գործընթացը մանրամասն ուսումնասիրելու եւ այդ մասին Գերագույն հոգեւոր խորհրդին զեկուցելու նպատակով:

## Կաթողիկոսի այցը Վրաստան հետաձգվել է

**Մայր աթոռի մամլո դիվանի տեղեկացմամբ՝ հրավիրող կողմի խնդրանքով մինչեւ հոկտեմբեր հետաձգվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝ հունիսին նախատեսված այցելությունը Վրաստան:**

**Այս առիթով Մայր աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը Էջմիածնում Գարեգին Երկրորդի նախագահությամբ գումարված Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում տեղեկացրել է, որ կաթողիկոսը կհյուրընկալվի վրաց պատրիարք Իլյա Երկրորդին հոկտեմբերի 22-23-ը, իսկ հոկտեմբերի 24-28-ը հովվապետական այց կկատարի Վիրահայոց թեմ՝ Թբիլիսի եւ Ջավախք:**

**Հ. Ա.**

## Իսրայելը ազատ արձակեց ձերբակալված բոլոր արտասահմանցիներին

ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության փոխանցմամբ այս մասին հայտարարել է Իսրայելի արտգործնախարարության մամլո խոսնակ Նիր Հեֆեցը, երկրի կառավարության արտահերթ նիստից հետո: Հիշեցնենք, որ Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուն ավելի վաղ հայտարարել էր, որ Իսրայելը չի ազատի ձերբակալվածներին, եւ չի դադարեցնի Գազայի հատվածի շրջափակումը, քանի դեռ «Գազայում իշխում է ՀԱՄԱՍ խմբավորումը»: Սակայն Եգիպտոսի իշխանությունները հայտարարել էր, որ այսուհետ Գազայի հատվածը բաց կլինի հումանիտար օգնությունների համար, իսկ Իսրայելը իր հերթին նշել է, որ պատրաստ է երկխոսություն սկսել միջազգային հանրության հետ՝ կապված Գազա ուղարկվելիք հումանիտար օգնության չափերի մեծացման հետ:Իր այս, «ընդառաջ» քայլերով, Թել-Ավիվը, թերեւս փորձում է որոշակիորեն թեթեւացնել միջազգային լարվածությունը, պակաս կարեւոր չէ նաեւ թուրք-իսրայելական ճգնաժամի շուտափույթ հաղթահարումը՝ Իսրայելի համար:

## Ծիրան քիչ կլինի. բացը կլրացնի խաղողը

Ի տարբերություն նախորդ տարվա, գյուղատնտեսները սպասում են խաղողի առատ բերքի: Այդ պարագայում խաղողագործները մթերման խնդրի առաջ չեն կանգնի: Վստահեցումը գյուղնախարար **Գերասիմ Ալավերդյանինն** է, խոստումը՝ նույնպես: «Անհանգստանալու ոչ մի խնդիր չունենք, մթերումը կազմակերպվելու է պատշաճ կերպով, հանդիպել ենք մթերող կազմակերպությունների հետ: Մի քանի խոշոր կազմակերպությունների հետ առանձին հանդիպում եւ քննարկում ենք ունենալու», ասաց նա:

Գյուղացիների մտավախությանը, թե Երեւանի կոնյակի գործարանը յուրաքանչյուր գյուղացուց պայմանագրով նախատեսված ծավալից 20 տոկոսով պակաս խաղող կմթերի, գյուղնախարարը այլ՝ ավելի համոզիչ պատասխան չգտնելով, միայն կրկնում էր. «Նման բան չկա»:

Եթե խաղողի պակաս պետությունում չի զգացվի, ապա անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով 40 տոկոսով պակաս ծիրանի բերք է սպասվում:

Այս տարի ցրտահարությունից եւ կարկտահարությունից հիմնականում տուժել են Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի եւ Սյունիքի մարզերի գյուղատնտեսությունները: Վերջնականապես չի ճշտվել հասցված վնասի չափը: Նախարարի համոզմամբ՝ այդ թեմայով կառավարությունում ծավալուն քննարկումներ են ընթանում:

Նախորդ տարի բնական աղետներից 12 մլրդ դրամի վնաս է կրել գյուղատնտեսությունը, որից 6 մլրդ-ը՝ կարկուտի հետեւանքով:

Հ. Հ.

## ԱՄՆ դեսպան. Թշնամանքի եւ լարվածության ստատուս քվոն չի բխում հակամարտության որեւէ կողմի շահերից

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կոսովո, թե Լեռնային Ղարաբաղ՝ Միացյալ Նահանգների դիտանկյունից բոլոր հակամարտությունները առանձին են դիտարկվում, ըստ այդմ էլ տարբեր են մոտեցումները: Արձագանքելով Կոսովոյի օրինակով նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ճանաչելու հարցին՝ այսպես պատասխանեց Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչը Հայաստանի ամերիկյան համալսարանում կազմակերպված հանդիպմանը:

Միացյալ Նահանգներ-Հայաստան երկկողմ հարաբերություններին նվիրված դեսպանի ելույթի մեկնարկը վերաբերում էր Ամերիկայի հայկական համայնքին, 1890-ականներից հայ-ամերիկյան առնչություններին, ժողովրդավարության, շուկայական տնտեսության, կրթության ու անցագրերի ստացման, անվտանգության հարցերին: Վերջին բաժնում դեսպանն անդրադարձավ ինչպես հայ-թուրքական




հարաբերություններին, այնպես էլ ղարաբաղյան խնդրին:

Յովանովիչը կրկնեց, որ ԱՄՆ-ը մեծապես աջակցում է Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման, սահմանի բացման Հայաստանի ջանքերը, ընդգծելով, որ Միացյալ Նահանգները ողջունում է Հայաստանի նախագահի որոշումը գործընթացը չդադարեցնելու մասին: «Երկու տարի առաջ ոչ մեկը չէր խոսում Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման մասին: Այժմ դա օրվա ամենակարեւոր հարցերից է ոչ միայն Հայաստանում, այլեւ Թուրքիայում», ասաց ԱՄՆ դեսպանը:

*Տես էջ 2*

# «Լեզուն գույք չէ, որ պարտքի դիմաց տանք ու կորցնենք ինքնությունը»



*Հենրիկ Հովհաննիսյան, Բաբկեն Հարությունյան*

Շուրջ մեկ ամիս Facebook սոցիալական ցանցում տեղի ունեցած «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների բացմանը» քննարկումների արդյունքում նախաձեռնության պահանջների տակ՝ հրաժարվել օտարալեզու դպրոցների բացման նախաձեռնությունից, ստորագրել է 2300 անդամ:

Թեքեյան կենտրոնում նախաձեռնության հեղինակների հրավիրած համաժողովի նպատակն էր քննարկել հասարակական լայն հնչեղություն ստացած հարցը: Հրավիրյալների թվում էր նաեւ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը: Նախարարությունից եկած հարցմանը՝ «Նախարարը ելույթ ունենալո՞ւ է», հնչել է բացասական պատասխան, Աշոտյանն էլ մերժել է՝ ասելով, որ համաժողովի մասնակիցները այլակարծություն չեն ընդունում:

Թե ինչու չեն ցանկանում լսել Աշոտյանին՝ մասնակիցները պատասխանում են, որ հանդիպումը ոչ թե բանավեճ է, այլ՝ բողոքի ակցիա: Նախարարի ելույթը լսել են, հիմա ցանկանում են, որ նախարարն իրենց լսի:

Արվեստագիտության դոկտոր **Հենրիկ Հովհաննիսյանը** օտարալեզու դպրոցների բացման նախաձեռնությունը բնութագրում է տխրահռչակ, օրինազանց: «Այդ որոշմանը դեմ է քվեարկել Հանրային խորհուրդը: Դեմ են նաեւ ԳԱԱ հայագիտության եւ հասարակագիտության ամբիոնների ակադեմիկոսները: Սա ծաղր է, զավեշտ: Պատասխանատվություն ենք կրում մեր պատմության եւ ապագայի համար», ասաց նա՝ հայտարարելով, որ բոլոր մեթոդներով կպայքարեն, որ չողծեն հայրենիքը:

Պատմական գիտությունների դոկտոր **Բաբկեն Հարությունյանը** մտավախություն ունի, որ օտարալեզու դպրոցների բացումը կնդի ժողովրդի ձուլմանը: «Լեզուն ժողովրդին ձուլելու միակ ճանապարհն է: Նույն մեթոդն էր կիրառում ցարական Ռուսաստանը, երբ փակում էր հայկական դպրոցները: Այդ ժամանակ պետականություն չունեցող երկիրը կարողացավ պահպանել իր վարժարաններն ու դպրոցները: Հիմա, երբ անկախ ենք, ցարական ձեռագրով օտարալեզու դպրոցներ ենք բացում», նկատում է Հարությունյանը:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն **Լավրենտի Հովհաննիսյանի** գնահատմամբ՝ հայոց լեզվի հաշվին օտարալեզու դպրոցների բացումն աններելի է: «Լեզուն գույք չէ, որ պարտքի դիմաց տանք ու կորցնենք ինքնությունը», ասում է նա:

Բնապահպան **Կարինե Դանիելյանն** ավարտել է ռուսական դպրոց եւ փաստում է, որ այնտեղ հայկական մշակույթը, գրականությունն ու լեզուն համարվում էին երկրորդական: «Մի անգամ այդ սխալը գործել ենք, երկրորդ անգամ չպետք է անել»:

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» հիմնադրամի նախագահ **Գարեգին Չուգասզյանը** եկել էր ոչ թե օտարալեզու դպրոցների հարցի քննարկմանը, այլ՝ թշնամական վերաբերմունքի: «Աշոտյանը դավաճան է. նրան դաս է հասնում: Նրան պաշտպանողներին՝ նույնպես»:

Երգիչ **Ռուբեն Հախվերդյանը** խնդիրների ակունքը փնտրում է անգրագիտության մեջ: «Իմ սիրելի գիրքը՝ «Ռանչպարների կանչը», ՀՀ առաջին նախագահը կարդաց ու չհասկացավ, մնացած երկուսը չեն էլ կարդացել, որ հասկանան: Մեղավորը նրանք չեն, ագիտությունն է: Սերժ Սարգսյանը լավ կանի հրաժարական տա: Չի տեսնում, որ երկիր կառավարել չի կարողանում: Ա՛յ մարդ, հրաժարական տուր, հողերը հետ տալու հարցից էլ կպրծնես: Լեզվի խնդիրների մասին խոսելուց առաջ նախ լեզուն կառավարողների խնդիրները լուծեք»:

Երկու ժամ տեւած ելույթներից հետո ներկաները հրապարակեցին ԱԺ պատգամավորներին ուղղված հայտարարություն-ուղերձը, ըստ որի օտարալեզու դպրոցների բացումը մեծագույն հարված է Հայաստանի անկախությանն ու հայոց ինքնությանը: «Պահանջում ենք կառավարությունից անհապաղ անդարձ հետ վերցնել «Լեզվի մասին» եւ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու նախագիծը, իսկ ԱԺ-ից՝ ոչ մի դեպքում այն չընդգրկել նիստերի օրակարգ»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՄՆ դեսպան. Թշնամանքի եւ լարվածության ստատուս քվոն չի բխում հակամարտության որեւէ կողմի շահերից

*1-ին էջից*

Հետաքրքրական էր, որ Մարի Յովանովիչը առանձնակի ընդգծեց ինչպես «Ես ներողություն եմ հայցում» շարժումը անցյալ տարի Թուրքիայում, այնպես էլ այս տարի առաջին անգամ Ստամբուլում «Հայկական հիշատակի օրվա» միջոցառումները: Ամերիկյան տեսանկյունից, հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը «իսկայական տնտեսական օգուտ կբերի Հայաստանին»: «Թուրքիայի, եւ մենք հույս ունենք նաեւ Ադրբեջանի, հետ բաց սահմանները Հայաստանի համար բաց կդարձնեն նաեւ 80 մլն մարդկանցից կազմված շուկան»:

Դեսպանի խոսքերով, անոմալիա է, երբ 21-րդ դարում Եվրոպայում դեռեւս կա փակ սահման, ուստի Միացյալ Նահանգները շարունակում է աջակցել Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների նորմալացմանը առանց նախապայմանների:

Ինչ վերաբերում է ԼՂ հարցին, ապա Յովանովիչը վերահաստատեց, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները շարունակում են իրենց աջակցությունը Հայաստանին եւ Ադրբեջանին՝ «Հելսինկյան ակտի սկզբունքների հիման վրա՝ ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն եւ ժողովուրդների հավասար իրավունքներ ու ինքնորոշում»:

Ամեն դեպքում, դեսպանի խոսքերով, Լ'Աքվիլայի, ինչպես նաեւ Աթենքի հայտարարություններով կարեւորվում են «Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձը Ադրբեջանի վերահսկողության տակ, ԼՂ-ի համար միջանկյալ կարգավիճակը՝ անվտանգության եւ ինքնակառավարման երաշխիքների ապահովմամբ, Հայաստան-ԼՂ միջանցքի, ԼՂ-ի վերջնական կարգավիճակի հետագա որոշումը՝ օրինական կամարտահայտությամբ, ներքին տեղահանվածների եւ փախստականների իրավունքը վերադառնալու բնակության նախկին վայրեր եւ անվտանգության միջազգային երաշխիքներ, որ կներառեն նաեւ խաղաղապահ գործունեությունը»:

Մարի Յովանովիչի մատուցմամբ՝ «Թշնամանքի եւ լարվածության ստատուս քվոն չի բխում հակամարտության որեւէ կողմի շահերից: Բնականաբար, հակամարտության լուծումը զիջումներ կպահանջի երկու կողմերից էլ»:

«ԱԶԳ»-Ի ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

# Ոչ մի երեխա չպետք է ունենա սիրո եւ ջերմության պակաս

**15-ամյա Հասմիկն ապրում է Երեւանի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունում: Ինչպես բոլոր մարդիկ, նա էլ երազանքներ ունի, սակայն Հասմիկի երազանքները շատ են տարբերվում իր հասակակիցների երազանքներից:**

**«Երազում եմ լավ աշխատանք ունենալ, որպեսզի կարողանամ պահել ընտանիքս», ասում է Հասմիկը:**

**Թիվ 1 գիշերօթիկ հաստատությունում ապրում են միակողմանի ծնողազուրկ եւ սոցիալապես անապահով ընտանիքների 6-18 տարեկան երեխաներ, որոնց միավորում է մի ցավալի երեւույթ՝ ծնողական խնամքի պակասը:**

**«Երբ նոր էի եկել գիշերօթիկ, այստեղ լավ էի զգում, բայց հիմա շատ եմ կարոտում տան անդամներին, ուզում եմ նրանց հետ ապրել,- ասում է Գրիգորը,- հայրս մահացել է, երբ շատ փոքր եմ եղել, հիմա մայրս, քույրս, եղբայրս, քրոջս երեխաներն ու ամուսինը մի տան մեջ են ապրում: Տանը նեղվածք է, բայց ես էլ եմ ուզում նրանց հետ ապրել»:**

**13-ամյա Գրիգորն ասաց, որ ընդամենը մի երազանք ունի. «Երազում եմ հայրիկ դառնալ»:**

**«Այստեղ ապրող երեխաները նյութական որեւէ բանի խիստ կարիք չունեն, նրանք ավելի շատ ծնողական խնամքի եւ սիրո կարիք ունեն», ասում է տնօրեն Մարինե Հովհաննիսյանը:**

**Գիշերօթիկ հաստատություններում ապրող երեխաների թե՛ սոցիալական, թե՛ հոգեբանական խնդիրներին պարբերաբար անդրադառնում են լրագրողները: «Ազգ» օրաթերթը եւ Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոցն այս անգամ որոշեցին ոչ միայն խոսել երեխաների խնդիրների մասին, այլեւ ինչ-որ ձեւով աջակցել նրանց: Շուրջ 1 ամիս խմբագրությունը եւ դպրոցը նախապատրաստական եռուզեռի մեջ էին: «Ազգի» աշխատակիցները, դպրոցի սաներն ու մանկավարժները սկսեցին խաղալիքներ, հագուստ, գրքեր հավաքել գիշերօթիկ հաստատության երեխաների համար: Երկար-բարակ պատրաստվելուց հետո՝ երեկ, հունիսի 2-ին, «Ազգի» աշխատակիցները, երաժշտական դպրոցի սաներն ու մանկավարժներն այցելեցին Երեւանի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, սակայն դա զուտ այցելություն չէր: Այնտեղ կազմակերպվեց համերգային ծրագիր՝ մասնակցությամբ հաստատության եւ դպրոցի երեխաների:**

**«Այսպիսի այցելությունները կարեւորվում եմ նրանով, որ գիշերօթիկ հաստատության երեխաները կարողանում են նոր մարդկանց հետ շփվել, որի կարիքը նրանք շատ ունեն», նշեց Մարինե Հովհաննիսյանը:**

**Երբ երեխաները տեղափոխվում են գիշերօթիկ հաստատություն, երկար ժամանակ նրանք չեն համակերպվում տնից հեռանալու մտքի հետ:**

**«Այստեղ պայմանները, իհարկե, բարեկեցիկ են, բայց նրանք իրենց մի տեսակ լքված են զգում: Նման այցելությունները օգնում են երեխաներին հասկանալու, որ նրանք լքված չեն բոլորի կողմից», ասում է Տաթեւիկ Մկրտչյանը՝ գիշերօթիկ հաստատության հոգեբանը, եւ հավելում, որ անգամ ամենածանր պայմաններում ապրող երեխաները գերադասում են ապրել տանը՝ հարազատների կողքին:**



**46-ամյա Նարինեի 2 երեխան էլ ապրում են թիվ 1 գիշերօթիկ հաստատությունում: Նարինեն հիմա ոչ մի տեղ չի աշխատում, արդեն 6 տարի բաժանված է ամուսնուց:**

**«Երեխաներս, նախկին ամուսինս եւ ես ապրում ենք 2 սենյականոց բնակարանում. ես ու երեխաներս՝ մի սենյակում, իսկ նրանց հայրը՝ մյուս սենյակում: Նախկին ամուսինս բացարձակապես չի օգնում մեզ: Ճիշտ է, տան մթնոլորտը ճնշող է, բայց երեխաներս ուզում են ապրել տանը, ոչ թե գիշերօթիկում: Էլ չգիտեմ ո՞նց վարվեմ», ասում է Նարինեն:**

**Բոլոր երեխաներն էլ ունեն սիրո եւ ջերմության կարիք՝ թե՛ մանկատան, թե՛ գիշերօթիկ հաստատության, եւ լավ կլինի, որ յուրաքանչյուր ոք ապրի այնպես, որ ոչ մի երեխա սիրո պակաս երբեք չունենա:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Բարձր տոկոսադրույքներով «Մանկական» ավանդ «Արդշինինվեստբանկից»

**Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկի» հասարակայնության հետ կապերի ծառայությունից, հունիսի 1-ից մինչեւ 30-ը ներառյալ, երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ, բանկը «Մանկական» ավանդ ներդնողներին առաջարկում է տոնական բարձր տոկոսադրույքներ: ՀՀ դրամով ավանդները կընդունվեն 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով՝ նախկին 9,9 տոկոսի փոխարեն եւ ԱՄՆ դոլարով՝ 7,3 տոկոս տարեկան տոկոսադրույքով՝ 6,9 տոկոսի փոխարեն:**

**Հաղորդագրության մեջ նշվում է, որ «Արդշինինվեստբանկն» իր հաճախորդների համար մշտապես անցկացնում է ավանդների ներգրավման շահավետ ակցիաներ, որոնցից վերջինի՝ «Հաղթանակ» ավանդի ընդունման վերջնաժամկետը մայիսի 28-ն էր: Ներկայումս բանկում ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից ներգրավված ավանդների ծավալը կազմում է շուրջ 67 մլրդ դրամ, որից ավելի քան 33 մլրդ դրամը ֆիզիկական անձանց ժամկետային եւ ցպահանջ ավանդներն են: «Արդշինինվեստբանկը» ներգրավված ավանդների ծավալով Հայաստանի բանկային համակարգում առաջատարներից մեկն է:**

**Ինչպես նշել է բանկի վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանը. «Արդշինինվեստբանկը», հավատարիմ մնալով գործունեության իր սկզբունքներին, կրկին բոլորին առաջարկում է շահավետ ակցիա, որն այս անգամ նախատեսված է բոլոր մանուկների եւ նրանց ծնողների համար:**

**Ա. Մ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 02/06/2010 22:00 Page 1





# «Ամեն հարցի լուծումը ազատ-արդար ընտրությունների ավանդույթի ձեւավորումն է»

*Կարծում է ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանը*


ARMENPRESS

Այս օրերին եւ ընդհանրապես որքա՞ն խնդիրներ կան ծառացած երկրի առջեւ, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ոլորտներում: Ղարաբաղի հարց, հայ-թուրքական «սառեցում», օտարալեզու դպրոցների բացման օրինագիծ, ընդդիմության ակտիվիստների հերթական ձերբակալում եւ այլն: Այս բոլորը, ըստ երեկ Մամուլի ազգային ակումբում ասուլիս հրավիրած ՀԺԿ առաջնորդ **Ստեփան Դեմիրճյանի**, լուծելի խնդիրներ են. «Եթե արդարություն եղավ, երկրում ձեւավորվեց ազատ-արդար ընտրությունների անցկացման ավանդույթ, մնացած բոլոր խնդիրները մեկը մյուսի հետեւից լուծվելու են: Անհրաժեշտ է սկսել ներքին հարցերից՝ ազատ-արդար հանրապետական ընտրությունների անցկացումից», նշեց Դեմիրճյանը: Իսկ ազատ-արդար ընտրություններ, ըստ ընդդիմադիր գործչի, հնարավոր է կազմակերպել նույնիսկ ընտրական թերի համակարգ ունենալով, նույնիսկ եթե «մեկ-երկու անգամ չի ստացվում». «Մեկ անգամ, երկու անգամ չեղավ՝ մյուս անգամ կլինի: Չեմ կարծում, որ արդար ընտրությունների ացկացումն անլուծելի խնդիր է. նույնիսկ ամենավատ ընտրական համակարգով կարելի է հասնել դրան. սա է մեր բոլոր հարցերը լուծող միակ ճանապարհը», ասաց Դեմիրճյանը: ՀԺԿ առաջնորդը շեշտեց նաեւ, որ իրենք դեմ են իշխանափոխության այդպես կոչված «ղրղզական տարբերակին». «Ոչ մի նման բան, մենք կողմնակից ենք ժողովրդավարական բարեփոխումներին եւ գործում ենք բացառապես օրենքի շրջանակներում», ընդգծեց Դեմիրճյանը:

Անդրադառնալով օրերս Ազատության նորաբաց հրապարակում որոշ ընդդիմադիր ակտիվիստների ձերբակալման փաստին՝ բանախոսը տարակուսանք հայտնեց. «Ի՞նչ է, չի՞ կարելի զբոսնել Ազատության հրապարակում»: Դեմիրճյանի խոսքերով, իշխանության գերնպատակ է դարձել թույլ չտալ ընդդիմության հավաքները. «Անշուշտ, նրանց հասկանալ կարելի է. իշխանությունները վախենում են, որ մեր շարժումները լայն թափ կստանան», ասաց Դեմիրճյանը, սակայն շեշտեց. «Այդ ձերբակալվածները ՀԱԿ-ի հետ որեւէ կապ չունեն, եւ մենք, դատապարտելով նման քայլը, պահանջում ենք անհապաղ ազատ արձակել նրանց, ինչպես նաեւ դեռեւս անազատության մեջ գտնվող քաղբանտարկյալներին»:

## «Զախողված արտաքին քաղաքականություն»

Որպես սրա ապացույց՝ Դեմիրճյանը մեջբերեց Եվրախորհրդարանի ընդունած 2216 բանաձեւը. «Իհարկե, այդ բանաձեւը իրավական ուժ չունի, սակայն շատ կարեւոր է կարծիքի ձեւավորման տեսակետից. միջազգային հանրությունը ոչ բարենպաստ կարծիք է ձեւավորել Հայաստանի մասին՝ հերթական անգամ պահանջելով դուրս գալ ազատագրված տարածքներից», նշեց բանախոսը: Կոնկրետ Ղարաբաղի հետ կապված՝ Դեմիրճյանը կողմնակից է «ոչ միակողմանի զիջումներին», իսկ հարցում մեծագույն սխալը համարում է այն, որ Ղարաբաղի փոխարեն բանակցություններում հանդես է գալիս Հայաստանը: Ինչ վերաբերում է հարցին, թե որո՞նք են Ստեփան Դեմիրճյանի պատկերացրած փոխզիջումները, բանախոսը նշեց. «Կարեւորը Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը հաշվի առնելն է, իսկ մնացյալը բանակցությունների խնդիր է»:

## «Ամեն մեկը՝ իր ճաշակով»

Օտարալեզու դպրոցների հարցին անդրադառնալով՝ Դեմիրճյանը շեշտեց, որ իրենք դեմ չեն օտար լեզուների խորացված ուսուցմանը, ինչպես նաեւ օտար լեզվով թեքումով դպրոցներին. «Բայց մենք դեմ ենք օտարալեզու դպրոցներին, առհասարակ կարծում եմ, որ կրթության ամեն մի նոր նախարար իր ճաշակով փորձում է փոխել համակարգը. սա անթույլատրելի է», եզրափակեց Դեմիրճյանը:

Հ. ԱՓՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

# Թվայնացման եվրոխմորը

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի նախագիծը, որ Ազգային ժողովի անցած քառօրյայում առաջին ընթերցում է անցել, հետո էլ ԱԺ լսումներին մի լավ շուռումուռ տրվել, ընդ որում՝ այս փոփոխությունները քննադատում էր անգամ Ազգային ժողովի նախագահը, հաջորդ շաբաթ կայանալիք վերջին քառօրյայում պետք է երկրորդ ընթերցմամբ ընդունվեր: Սակայն, մինչ այդ, ԵԱՀԿ ԶԼՄ-ների հարցերով ներկայացուցիչ **Դունյա Միյատովիչը** երեկ կոչ է արել Հայաստանի իշխանություններին օրենքի նախագիծն ընդունելուց առաջ համապատասխանեցնել ԵԱՀԿ եւ եվրոպական չափանիշներին: Հիշեցնենք, որ մինչեւ խորհրդարանական լսումները Միյատովիչի գրասենյակը օրենքի նախագծի վերաբերյալ փորձագիտական տեսակետ էր ներկայացրել, լսումների ժամանակ դրանք բաժանվեցին, որտեղ նշվում էին մի շարք մտահոգիչ խնդիրներ, նաեւ առաջարկներ էին արվում: Մտահոգությունները վերաբերում են նրան, որ ՀՌԱՀ-ը այս նախագծով այլեւս պարտավորություն չի ունենալու լիցենզիա ստանալը մերժելու պատճառները հիմնավորել, խախտվելու են մրցակցության կանոնները, քանի որ թվային հեռարձակման մասնավոր մուլտիպլեքսորների ստեղծումն է անորոշ ժամանակով հետաձգվում, մինչդեռ անալոգային հեռարձակումն արդեն 2013 թվականի հուլիսից դադարեցվելու է: Բացի այդ նոր նախագծով դուրս է գալիս ՀՌԱՀ-ի՝ այժմ գործող տարին առնվազն մեկ անգամ հաճախականությունների պլանը հրապարակելու պարտականությունը, որն ավելի անորոշ է դարձնում լիցենզավորման եւ մրցույթների ընթացակարգերը, մուլտիպլեքսների հստակ կարողությունն ու թիվը՝ դրանք դարձնելով տարմեկնաբանությունների եւ բյուրոկրատական մոտեցումների ենթակա: Այս եւ մի քանի այլ թերությունները նկատելով, որոնք առաջարկվում է վերանայել, Դունյա Միյատովիչը նշում է. «Եթե նախագիծն ընդունվի ներկա տեսքով, հեռարձակման ոլորտում բազմակարծություն չի ապահովվի: Նախագծով նաեւ չի հաջողվել ամուր հիմք ստեղծել թվայնացման գործընթացի համար», ասում է ԵԱՀԿ ԶԼՄ-ների հարցերով ներկայացուցիչը՝ հավելելով, որ լավ նախագիծը կպաշտպանի հեռարձակողների անկախությունը, նպաստելով ԶԼՄ-ների ազատությանը եւ խթանելով մրցունակ եւ տնտեսապես կայուն հեռարձակման դաշտի ստեղծումը Հայաստանում:

Հիմա ինչ, անտեսվելո՞ւ են ԵԱՀԿ ներկայացուցչի այս տեսակետները. եթե այո, բռավո, մեր իշխանություններն արժանի են «գովասանքի», քանի որ թվայնացում ասելով միշտ եւ հիմա նրանք նախ հասկացել են հեռուստադաշտի վերահսկում, եթե ոչ, էլի «բռավո», այս անգամ չակերտներով, քանի որ ծույլիկ աշակերտի նման նրանք սպասում են, մինչեւ եվրոդասատուները մի լավ կձգեն նրանց ականջները, նոր դասը «5»-ի կսովորեն:

Բոլոր դեպքերում եկող շաբաթ այս փաթեթի քննարկումը երկրորդ ընթերցմամբ առավել հինչեղ է լինելու:

Մ. Խ.

# Ուրախ մանկությունը կարող երիտասարդության եւ ամուր հայրենիքի հիմքն է

Հայաստանի սահմանամերձ շրջաններում հասարակական խնդիրները՝ աշխատատեղերի պակաս, երիտասարդության զբաղվածության ապահովվում եւ այլն, առավել սուր են երեւում: Սակայն հայրենիքը սկսվում է հենց սահմանից, ուստի խնդիրները տեսանելի լինելու փոխարեն այստեղ, առավել, քան որեւէ տեղ, պետք է ակնառու լինեն այդ խնդիրների լուծման միջոցները:

Մեկ այլ ճշմարտությամբ՝ հայրենիքը «սկսվում է» նաեւ մանուկներից՝ նրանց դաստիարակումից, հետեւաբար սահմանամերձ բնակավայրում բնակվող հայ մանուկն այն կարեւորագույն օղակն է, որտեղից հենց պետք է բացառվի հիասթափվածությունը հայրենիքի հանդեպ: Սրա համար անհրաժեշտ է, որ երեխան ունենա ուրախ մանկություն (եթե ոչ անհոգ), ոչ թե հենց մանուկ հասակից զբաղվի ծանր գյուղատնտեսական աշխատանքներով:

«Ժողովրդավարություն, աշխատանք» կուսակցության նախագահ, ԱԺ պատգամավոր **Սպարտակ Մելիքյանն** իր համար ավանդույթ է ստեղծել՝ ամեն տարի սեպտեմբերի մեկին, վերջին զանգին այցելում է Հայաստանի սահմանամերձ, հատկապես փախստականներով բնակեցված գյուղերը, շնորհավորում առաջին դասարանցիներին ու շրջանավարտներին: Վերջին այցելության ժամանակ գյուղացիները դիմել էին պատգամավորին՝ իրենց գյուղերում մանկական խաղահրապարակներ հիմնելու խնդրանքով, քանի որ գյուղերում մանուկները որեւէ զբաղմունք չունեն: Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, Գեղարքունիքի մարզի Կախակն եւ Փոքր Մասրիկ գյուղերում Մելիքյանի ջանքերով, բացվեցին այդ խաղահրապարակները: Տեսնել էր պետք երեխաների ոգեւորությունը, նրանք այսուհետեւ, բացի դասերից ու «տիկնիկ-մեքենաներով» խաղալուց, նաեւ կարուսել գնալու հնարավորություն ունեն իրենց հարազատ գյուղում: «Ես կարուսել գնացել եմ մեծ քաղաքներում ու միշտ ուզել եմ, որ մեր գյուղում էլ լինի: Մինչեւ հիմա դպրոցից հետո՝ տանն էի խաղում, դուրս չէի գալիս, բայց հիմա արդեն քույրիկներիս, ընկերուհիներիս հետ ամեն օր կգամ այստեղ», ասաց 8-ամյա Ռաիսան՝ Կախակն գյուղից: «Մենք շատ շնորհակալ ենք Սպարտակ Մելիքյանին՝ մեր խնդրանքին ընդառաջ գնալու համար, մեր երեխաները ոչ մի զբաղվելու բան չունեին, այժմ նրանց դեմքից ժպիտը չի իջնում», նշեց երկու անչափահաս երեխաների մայր **Աննան**: Առհասարակ որքա՞ն հեշտ է երեխային ժպիտ պարգեւել, որքան հեշտ՝ նույնքան էլ կարեւոր:





Գեղարքունիքի մարզի Կախակն ու Փոքր Մասրիկ գյուղերը բնակեցված են Ադրբեջանից (հայկական Ադրբեջանից - Հ. Ա.) գաղթած փախստականներով: Ինչպես մեր զրույցում նշեց գյուղի տարեց բնակիչներից տիկին **Ալվինան**՝ Կախակնը ունի շուրջ 100 տուն. «Երիտասարդ ընտանիքները շատ են, երեխաները՝ նույնպես: Այս բարի գործը շատ կարեւոր է մեզ համար. մեր երեխաները վաղուց այսքան չէին ուրախացել», նշեց նա:

Բացի խաղահրապարակից, Սպարտակ Մելիքյանը, որը՝ արդեն ձեւավորված ավանդույթի համաձայն, երեխաներին նվիրված միջոցառմանը մասնակցում էր ընտանիքի հետ, երեխաներին նաեւ նվերներ էր բերել: Մանուկների ուրախությունը կրկնապատկվում էր, երբ կարուսելից «հոգնած»՝ նրանք նաեւ տարբեր նվերներ էին ստանում՝ մասնակցելով կազմակերպված խաղարկությանը: Երկու գյուղերում էլ միջոցառումն ուղեկցվում էր ավանդական երգ ու պարով. Հայաստանի սահմանամերձ գյուղերից երկուսում մանուկների տոնը ստացվեց՝ չժպտացող երեխա պարզապես չկար: Ինչպես Կախակնում, այնպես էլ Փոքր Մասրիկում, որն ունի շուրջ 150 տուն, այդ թվում՝ երիտասարդ ընտանիքներ, խաղահրապարակների կարմիր ժապավենի կտրելը վստահվեց երեխաներին. կարելի է ասել՝ նրանք սեփական ձեռքերով բացեցին իրենց «ուրախությունը»:

«Այս մարդիկ, լինելով փախստական, արդեն իսկ հանդիպել են կյանքի դաժանությանը, հետեւաբար շատ կարեւորում ենք գոնե փորձը՝ ուրախացնելու նրանց: Մյուս հարակից գյուղերում նույնպես անպայման մենք խաղահրապարակներ կկառուցենք: Դրանք արդեն գործում են Արարատի մարզի մի քանի գյուղերում», ասաց Սպարտակ Մելիքյանը: «Գյուղերում երեխաների խաղահրապարակներով, ժամանակակից, համակարգչային դասարաններով մենք կարող ենք ստեղծել այն պայմանները, որ երեխան մանկությունից արդեն չհիասթափվի երկրից, հակառակը՝ իր ապագան կապի հայրենի գյուղի, հայրենիքի հետ», շեշտեց Մելիքյանը:

Նաեւ փոքրիկ խաղահրապարակներով պետք է շենացնել հայրենիքը, նաեւ դրա կարեւորությունը հսկայական է, առհասարակ անգնահատելի է երեխաների բարեկեցությանը, նրանց ժպիտ պարգեւող ամեն մի քայլը: Այդ ժպիտներից հետո՝ հետդարձի ճանապարհին Սեւանա լճի «կապույտ-փայլն» այլեւս տեսանելի չէր:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ
Կախակն-Փոքր Մասրիկ-Երեւան

AZG NEW PDF.qxd 02/06/2010 22:00 Page 1



# Արձագանք

## Անհրաժեշտ պարզաբանում

# Բարությո՞ւն, թե՞ բարեկրթություն

***ՀՀ ոստիկանության կայքէջում նույն վերնագրի ներքո հրապարակվել է հետեւյալ պարզաբանումը որպես արձագանք մեր թերթի մայիսի 5-ի հրապարակվածի:***

Մեր պարզաբանման նյութը **«Ազգ»** օրաթերթում մայիսի 5-ին տպագրված «Թաղային տեսո՞ւչ, թե՞ քննիչ» հրապարակումն է, որի հեղինակը թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանն է:

Անդրադառնալով թաղային տեսուչների ինստիտուտին՝ մեծարգո խմբագիրը գրում է.

*«Կյանքը ցույց տվեց, որ անկախ Հայաստանում նույնպես անհրաժեշտ նկատվեց հասարակական անվտանգության համար վերականգնել թաղայինների ինստիտուտը՝ ավելի քաղաքակիրթ անվանումով՝ թաղային տեսուչ: Բայց... ինչպես ամեն նորամուծություն մեզ մոտ, այս մեկն էլ այժմ ենթակա է այլասերման, անշուշտ, եթե վերահսկողության չենթարկվի վերահսկողական այդ կառույցը»:*

Եվ ապա.

*«Փա՞ստ: Օրերս ստացանք Երեւանի Կենտրոն համայնքից վկայություն, թե իրեն ինչպես սանձարձակ ու անկիրթ է պահել թաղային տեսուչներից մեկը: Կոպիտ եւ տիրական նա մտնում է Աբովյան փողոցի շենքերից մեկը, զարկում բնակարանների դռները եւ մանրամասն հարցաքննում բնակիչներին: Տեսուչը նման ձեւով է վարվել նաեւ Ֆրանսիայից ժամանած 70 տարեկան պատկառելի մի զույգի հետ, որն արդեն 15 տարի բարեգործական հրաշալի ծրագիր է իրականացնում Արցախի գյուղացիների համար: «Ձեր սեփական բնակարա՞նն է սա»՝ կոշտ ու կոպիտ հարցրել է հաստափոր տեսուչը մեր ֆրանսահայերին եւ դրական պատասխան ստանալուց հետո շարունակել է հարցաքննությունը՝ «Ի՞նչ եք անում այստեղ, աշխատանք ունե՞ք Երեւանում, որտեղի՞ց է ձեր եկամուտը, սեփական մեքենա ունե՞ք, իսկ զարա՞ժ» հարցաշարով: Եվ ապա հնչեցրել է իր ամենախորաթափանց հարցումը՝ «անդա՞մ եք որսորդմիությանը» եւ հյուրերի համար անհասկանալի այդ հարցին բացասական պատասխան ստանալուց հետո տվել է վճռական հարված-հարցը՝ «զենք ունե՞ք»:*

*«Պատկերացնել կարելի է այլայլված, ինչ որ տեղ վախեցած, ինչ որ տեղ սրտնեղած վիճակը ամոլի (ամուսնական զույգի - «02»): Ո՞վ է այս մարդը, ի՞նչ իրավունք ունի հարցաքննելու, ո՞ւմ հրահանգն է կատարում, եւ ինչո՞ւ է ձեռքի հաս տետրի մեջ ինչ որ բաներ արձանագրում»:*

Այնուհետեւ հոդվածագիրը հարց է տալիս.

*«Եվ իսկապես, ո՞վ է թաղային տեսուչը, ի՞նչ լիազորություններ ունի եւ ո՞վ է վերահսկում նրա գործողությունները քաղաքացիների ու հյուրերի նկատմամբ»:*

Մենք պարզեցինք, որ ՀՀ ոստիկանության պետի թիվ 1878 հրամանի պահանջների համաձայն՝ ոստիկանության Կենտրոնականի բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի տեղամասային տեսուչ, ոստիկանության կապիտան Տ. Մանսուրյանը մայիսի 4-ին կատարել է բնակչության հաշվառում իր կողմից սպասարկվող Կենտրոնի վարչական տարածքի թիվ 17 տեղամասում, որի ժամանակ հաշվառում է կատարվել Երեւանի Աբովյան փողոցի 21 շենքում:

Պարտք ենք համարում մեծարգո խմբագրին տեղեկացնել, որ ոստիկանության տեղամասային տեսուչների պարտականությունները սահմանվել են ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 18-ի թիվ 1233 Ն որոշման համապատասխան կետով:

Ըստ այդմ, տեղամասային տեսուչը պարտավոր է իր կողմից սպասարկվող տեղամասում անցկացնել բնակչության հաշվառում, կատարել գույքագրում, ճշտել բնակչության զբաղվածության բնույթը, ի հայտ բերել զենք ունեցող անձանց, ստուգել ժամանակավոր օգտագործման համար զենք ստացած եւ զենքի սեփականատեր հանդիսացող անձանց բնակության վայրում զենք պահելու պայմանները, հետեւել անձնագրային ռեժիմի պահպանմանը, այդ նպատակով կատարել ստուգայցեր, հսկողություն իրականացնել սպասարկվող տեղամասում բնակվող օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ տարածք մուտք գործելու, ՀՀ-ում գտնվելու, ՀՀ տարածքից դուրս գալու, ինչպես նաեւ ՀՀ-ում տարանցիկ գտնվելու եւ (կամ) երթեւեկելու վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կանոնների պահպանման նկատմամբ, գործունեություն ծավալել քաղաքացիների անձի եւ գույքի անվտանգության ապահովման ուղղությամբ, ստուգել ապրանքանյութական արժեքների առկայությունը, միջոցներ ձեռնարկել արտակարգ իրավիճակների ժամանակ մարդկանց կյանքը փրկելու, գույքը պահպանելու, առաջին օգնություն ցույց տալու, շրջակա միջավայրի եւ բնակչության էկոլոգիական անվտանգության պահպանության ուղղությամբ, անօրինական կրոնական կամ հասարակական կազմակերպություններ հայտնաբերելիս ձեռնարկել հարցի իրավական կարգավորման միջոցներ, հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ ու տեղեկություններ ստանալիս հրազեկել ոստիկանության բաժին, մինչ օպերատիվ խմբի ժամանելը իր իրավասության սահմաններում կատարել դատավարական անհրաժեշտ գործողություններ (դեպքի վայրի պահպանում, ականատես անձանց հայտնաբերում եւ այլն, իմանալ իր տեղամասի քրեական վիճակը, քրեածին տարրերին, ձեռնարկել հանցագործությունների կանխարգելման եւ բացահայտման միջոցառումներ... եւ այլն (առավել մանրամասն տեղեկություններ ստանալ ցանկացողները կարող են օգտվել ՀՀ ոստիկանության www.police.am ինտերնետային կայքի «Արխիվ» բաժնի «Պարզաբանումներ ձեզ համար» ենթաբաժնի «Ինչպիսի՞ գործառույթներով է օժտված տեղամասային տեսուչը» հոդվածից):

Բացի այդ՝ տեղամասային տեսուչը պարտավոր է կազմել, լրացնել եւ ունենալ տեղամասի անձնագիր, աշխատանքային տետր, հսկողական քարտ եւ այլն: Սրանց մեջ տեսուչը գրառում է համապատասխան տեղեկություններ, իսկ հիշյալ փաստաթղթերի վարման կարգը սահմանված է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:

Հավելենք, որ տեղամասային տեսուչը պարտավոր է ներկայացնել տարբերական հաշվետվություններ, նրա աշխատանքի վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, համապատասխան մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից, իսկ տեսուչի իրավունքները որոշվում են նրա պարտականությունների շրջանակով:

Ասվածից ակնհայտ է, որ հոդվածագրի հիշատակած դեպքում տեղամասային տեսուչը գործել է իր լիազորությունների շրջանակում:

Այլ բան, որ այդ ամենը կատարվել է «ոչ այնքան բարեկիրթ ձեւով» (մենք մեզ թույլ ենք տալիս փոքր ինչ մեղմել հեղինակի ձեւակերպումները): Բնավ մտադիր չենք պատսպարվել արդարացմամբ, թե ֆրանսիական բարեկրթությանը սովոր մարդուն Հայաստանում թերեւս շատ բան կարող է խորթ ու անբարեկիրթ թվալ: Դա մեր բոլորի ընդհանուր թերությունն է, ցավն ու խնդիրը: Մեր ազգային նկարագրին բնորոշ է ոչ այնքան բարեկրթությունը, որքան բարությունը: Իսկ երբ այլեւայլ հանգամանքների բերումով բարությունն ստիպված մղվում է երկրորդ պլան, տուժում է նաեւ բարեկրթությունը: Մեր խնդիրը բարի լինելուց անդին բարեկրթություն սովորելն է: Հուսանք, որ **«Ազգի»** այս հրապարակումը քայլ կհանդիսանա այդ ճանապարհին եւ կնպաստի, որ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս ոստիկանության աշխատակիցները առավել նախանձախնդիր լինեն ոստիկանության աշխատակցի էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ, ինչը, ի դեպ, մտնում է նրանց պարտականությունների շրջանակի մեջ (ընդ որում, ասվածը վերաբերում է ոչ միայն ոստիկաններին):

Պարտք ենք համարում նաեւ մեր կողմից հայցել մեր ֆրանսահայ հայրենակիցների ներողամտությունը եւ երախտագիտություն հայտնել Արցախին ցուցաբերած օգնության համար: Տեղամասային տեսուչը պարտավոր է իր տեղամասի ու բնակիչների մասին իմանալ գրեթե ամեն ինչ: Հուսանք, որ հիշատակված տեսուչն արդեն հետեւություն արել եւ տարեց ու երախտավոր ամուսինների հանդեպ որդեգրել է համապատասխան վերաբերմունք: Ինչը, ի դեպ, պիտի հանդես բերենք բոլորս բոլորիս նկատմամբ: Բարի լինելը յուրաքանչյուրիս անհատական խնդիրն ու արժանիքն է, բարեկիրթ լինելը՝ բոլորիս պարտքն է: Ով չի կարող բարի լինել, պարտավոր է առնվազն բարեկիրթ լինել: Իսկ ով բարի է, պիտի ձգտի բարեկիրթ լինել անկախ որեւէ հանգամանքից: Միջոցը նույնքան ու երբեմն առավել կարեւոր է, քան նպատակը: Իսկ թյուր միջոցը արժեզրկում է նպատակը: Նաեւ այն դեպքում, երբ մարդուն անվանում են «հաստափոր»:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

**Խմբ. կողմից** - **Մեզ զարմացնում է հրապարակված «Պարզաբանման» այն երկու հատվածը, որտեղ հույս է հայտնվում, որ մեր հոդվածը «քայլ կհանդիսանա» եւ «հիշատակված տեսուչն արդեն հետեւություն» արած կլինի պարտականությունները կատարելիս ոստիկանության աշխատակիցների համար սահմանված էթիկայի կանոնները պահպանելու: Նման բան կարող էինք գրել մենք, այս պարագայում՝ ԶԼՄ ներկայացուցիչներս: Այնինչ նման գերատեսչության մեջ, որքան մեզ հայտնի է, ոչ թե «հույս են հայտնում», այլ պարտավորեցնո՛ւմ են աշխատակիցներին որքան «բարի, այնքան էլ բարեկիրթ» լինել:**

**Մեզ առավել զարմացրեց «Պարզաբանման» այն հայտարարությունը, թե «տեղամասային տեսուչը պարտավոր է իր տեղամասի ու բնակիչների մասին իմանալ գրեթե ամեն ինչ» (ընդգծումը մերն է): C'st trop, պիտի ասեր ֆրանսահայ մեր հայրենակիցը: Դա շատ-շատ է, ասում ենք մենք: Զենք-զինամթերքի նկատմամբ հետաքրքրությունը հասկանալի է, սակայն մնացյալի մասին հետաքրքրությունները մեզ այլ բաներ են հիշեցնում, այլ թվականներ, հատկապես որ նշյալ շենքում, բնականաբար նաեւ մյուս շենքերում, մեծամասնությունը մեր քաղաքացիներն են, եւ բոլորն ունեն անձնական կյանքի, անձնական տվյալների անձեռնմխելիության իրավունք: Ի դեպ, սահմանադրակա՛ն իրավունք: Կարծում ենք, արժե առանձին զբաղվել այս շատ լուրջ հարցով:**

**Վերջում՝ ներողություն ենք խնդրում «հաստափոր» բառի համար:**

ՇԻՐԱԿԻ ԿԱՏԱԿՆԵ՞Ր

# «Հայտնաբերել են»... Կաղանդ պապի կեցավայրը

## *Ամասիայի լեռներում ապրող Ձմեռ պապը կարող է դառնալ համահայկական*

Երեւի բոլոր ժամանակների երեխաներին է հետաքրքրել այն հարցը, թե ի վերջո որտեղ է բնակվում եւ որտեղից է գալիս հրաշագործ ու սիրելի Ձմեռ պապը, որին սպասում են ամեն Ամանոր՝ իրենց ցանկությունները հայտնելու եւ սպասված նվերները ստանալու: Ինչ-որ Լապլանդիայում գտնվող Սառնամանիք պապի, եվրոպական Սանտա Կլաուսի մասին բացատրություններն ակնհայտորեն չեն բավարարել Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի նախաձեռնող խմբի անդամ լուրջ մեծահասակներին, որոնք չմոռանալով իրենց մանկության երազները, երկար ժամանակ մտածել են, թե ախր մեր հայկական Ձմեռ պապը կամ Կաղանդ պապին պետք է որ ավելի հին ժամանակներից եկած լինի եւ որպես հայ՝ բնակվելիս լինի ոչ թե հեռավոր ու օտար լապլանդիաներում, այլ երեւի Հայաստանի ամենացուրտ ու հեռավոր մի անկյունում:

Երկար ուսումնասիրություններն ու համառ որոնումները վերջապես պսակվել են սենսացիոն դառնալու հավակնող հաջողությամբ... Ոչ պատահականորեն հունիսի 1-ին՝ Մանուկների պաշտպանության միջազգային օրը, Գյումրու «Ասպարեզ» լրագրողական ակումբում հրավիրած մամուլի ասուլիսում նախաձեռնող խմբի անդամները՝ իրավապաշտպան **Սեյրան Մարտիրոսյանը**, «Շիրակ-տուր» կազմակերպության տնօրեն **Ալեքսան Տեր-Մինասյանը** եւ լրագրող **Համլետ Մոսինյանը** (խմբի չորրորդ անդամ **Զավեն Խաչիկյանը** ներկայացված էր իր լուսանկարներով) հայտարարեցին, որ իրենց հաջողվել է հայտնաբերել Հայաստանի Ձմեռ պապի կեցավայրը... «Հայտնի է դարձել», որ նա իր բնակության համար նախընտրել է մեր հանրապետության ցրտի բեւեռը՝ Ամասիայի շրջանը: Ավելի կոնկրետ՝ Ցուրտավ խորհրդանշական անունը կրող սարը (2950 մ բարձրութ.), որը գտնվում է Արփի լճի մոտ՝ Մեծ Եղնախաղ (3042 մ) եւ Եռակատար (3008 մ) լեռնագագաթների միջեւ:

«Մայիսի 28-ին մեզ հաջողվեց հանդիպել նրան: Կաղանդ պապն իր սիրած վայրերից մեկը՝ ծովի մակարդակից 2137 մետր բարձրության վրա գտնվող Եղնաջուր գյուղ եկավ միայնակ: Միմյանց շնորհավորեցինք տոնի՝ Հանրապետության օրվա առթիվ եւ ծանոթացանք»,- պատմեցին նախաձեռնող խմբի անդամները: Ձմեռ պապը նրանց պատմել է, որ մեծ ընտանիք ունի, Ամանորին սարից իջնում են, շրջում ողջ Հայաստանում, մտնում մարդկանց օջախները, շնորհավորում Նոր տարին, երեխաներին ու մեծերին ուրախացնում եւ ուրախանում: Իրեն օգնում են ընտանիքի մյուս անդամները: Ամանորի տոներից հետո վերադառնում են եւ պատրաստվում հաջորդ Ամանորին: Ասել է նաեւ, որ առաջիկա տարեգլխին մեզ շատ հետաքրքրական, զարմանալի եւ հեքիաթային անակնկալներ են պատրաստում:

...Ո՞վ կարող է առանց երբեւէ մանկական հեքիաթով ապրելու՝ կյանքում մարդկային բարձունքների հասնել: Թվում է՝ ընդհանուր արձագանքի դեպքում սա բավական գեղեցիկ, մեր մանուկներին ավելի հոգեհարազատ հեքիաթ կարող է լինել՝ այս խառնակ աշխարհում նրանց ու մեզ էլի մի թելով կապելով մեր ազգապահ ակունքներին: Ցրտաշունչ Ամասիան, Եղնաջուրը, որն, ի դեպ, ընդգրկված է նորակազմ «Արփի լիճ» ազգային պարկի շրջագծում, ձմեռները համատարած սպիտակ ձյան, ամառները՝ զովաշունչ ու հրաշալի ալպյան վայրեր են՝ բնության անկրկնելի անկյուններով, այլ հրաշալիքներով, Եղնաջրի մանկական ամառային ճամբարով: Այս վայրերում կարելի է մանկական հավաքներ, միջոցառումներ կազմակերպել, զբոսաշրջությունը, մասնավորապես էկոտուրիզմը զարգացնել: Առայժմ նախաձեռնողները մտադիր են հետաքրքրված նկարիչների, դիզայներների միջոցով ստեղծել հայ Ձմեռ պապի հագուստը, կահավորել նրա բնակարանը, հավանաբար այս եւ այլ հարցերի լավագույն լուծման համար մրցույթներ կհայտարարվեն: Արձագանքներ, որոշ պայմանավորվածություններ արդեն կան: Թերեւս այս գործում իրենց օգտակար ավանդը կարող են ներդնել նաեւ մեր ազգագրագետները, ճարտարապետները, այլ ոլորտների մասնագետները: Նախատեսվում է հետագայում նաեւ համագործակցել Ձմեռ պապիների միջազգային ընկերակցության հետ: Իսկ ամենակարեւորը կազմակերպիչները Ձմեռ պապի համահայկական կերպարի կերտումն են համարում ու ցանկանում են, որ այն դառնա համահայկական երեւույթ, ընդգրկելով նաեւ Սփյուռքը:

Ինչպես ներկայացվեց, «Ապագա տեխնոլոջիս» ընկերությունը խոստացել է «Կաղանդ պապ.am» կայքէջ ստեղծել: Իսկ «շատ առույգ, համակրելի, կատակաբան, պերճախոս, մի խոսքով՝ հեքիաթային մարդ» մեր հայ Ձմեռ պապը, չնայած առնվազն երկուհազարամյա տարիքին, երկար թախանձանքներից հետո եւ հաշվի առնելով բոլոր հայ մանուկների ցանկությունը, համաձայնել է իրեն օգնելու համար Գյումրիում ստեղծել իր գրասենյակը: Վերջինս արդեն սկսել է գործել: Բոլոր ցանկացողները կարող են նրան նամակ ուղարկել հետեւյալ պարզ հասցեով՝ Շիրակի մարզ, Գյումրի, Ձմեռ պապին: Կամ ավելի կարճ՝ Ձմեռ պապին: Նախաձեռնող խմբի անդամները հավաստիացնում են, որ բոլոր նամակները, մաղթանքները, գաղափարներն ու առաջարկությունները հասցեատիրոջը կհասնեն:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

AZG NEW PDF.qxd 02/06/2010 22:01 Page 1





# Ադրբեջանն առանձնահատուկ երկիր է մահմեդական աշխարհում

## *Իրանը ծանր զրահատեխնիկա է տեղակայել Ադրբեջանի սահմանում*

**«Ազգը»** բազմիցս է անդրադարձել Ադրբեջանի «երկակի խաղին»՝ Իրանի եւ Իսրայելի հետ: Հարեւան երկիրը, լինելով մահմեդական, իրականացնում է մի շարք համատեղ ծրագրեր մահմեդական աշխարհի թշնամի Իսրայելի հետ՝ չմոռանալով նաեւ «բարեկամության երդումներ» տալ Իրանին: Ադրբեջանի այս առանձնահատկությունը բավական լուրջ գնահատականի է արժանացել ԱՄՆ-ում: Ամերիկացի կոնգրեսական Դանիել Բ. Մաֆֆեին, հանդես գալով «Ադրբեջան-Իսրայել. Իրանի հարեւանությամբ՝ լավագույն բարեկամները» կոնֆերանսում, նշել է. «ԱՄՆ-ի համար անչափ կարեւոր է մեծ ուշադրություն դարձնել Ադրբեջանին՝ ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմավարական ու անվտանգության տեսանկյուններից, քանի որ այդ երկիրը, ԱՄՆ-ի հետ բազմաոլորտ համագործակցություն ծավալելով, կարողանում է նաեւ պահպանել լավ հարաբերություններ մուսուլմանական աշխարհի, ինչպես նաեւ Իսրայելի հետ»: Մաֆֆեին զուգահեռներ է անցկացրել Իրանի ու Ադրբեջանի միջեւ՝ նշելով, որ չնայած Իրանի նկրտումներին, Ադրբեջանը, որի բնակչության 90 տոկոսը շիաներ են, ընտրել է բոլորովին այլ զարգացման ուղղություն. «Սրա մեջ, անշուշտ, մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, որ Ադրբեջանը հետխորհրդային երկիր է, հետեւաբար պատահական չէ նրա՝ զարգացման աշխարհիկ ճանապարհ ընտրելը՝ մերձենալով Իսրայելի հետ: Այս վերջինին նպաստել է այն, որ Ադրբեջանում կա տարիների պատմություն ունեցող հրեական համայնք, որին բավական լավ են վերաբերվում: Իսրայելն ու Ադրբեջանն այսօր լուրջ համագործակցում են տարբեր ոլորտներում, այդ թվում անվտանգության եւ ռազմական բնագավառներում. Ադրբեջանը անչափ կարեւոր հետախուզական տեղեկություններ է տրամադրում Իսրայելին», հայտարարել է ամերիկացի կոնգրեսականը:

Այս վերջին «բացահայտման» կապակցությամբ նկատենք, որ Ադրբեջանը էլ ո՞ւմ դեմ, եթե ոչ Իրանի, պետք է հետախուզական տեղեկություններ հաղորդի Իսրայելին, մանավանդ հաշվի առնելով, որ, ըստ իսրայելական մամուլի, Ադրբեջանի հարավում՝ Իրանի հարեւանությամբ տեղակայված են մի շարք իսրայելա-ամերիկյան հետախուզական կենտրոններ: Եթե գումարենք նաեւ Ադրբեջանի «պատմական» ձգտումները դեպի Իրանի հյուսիսային նահանգներ, Կասպից ծովում առկա «տարածքային վեճերը», ապա հասկանալի կլինի, որ Թեհրանի հետ Բաքուն բարեկամություն է անում զուտ «իսլամական հանդուրժողականությունից» դրդված, հանուն հակաիրանական ճամբարին «հետախուզական տեղեկություններ» տրամադրելու անհրաժեշտության: Անշուշտ, Իրանում գիտեն այս մասին: «**Ազգ**»-ին տված հարցազրույցում իրանական «Նոր հայացք» գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Միրխասեմ Մոմմանին նշեց, որ Թեհրանը վաղուց է ծանոթ Ադրբեջանի պանթուրքական ձգտումներին, նա տհաճություն որակեց Բաքվի այդ քայլերը՝ հատկապես պատմության խեղաթյուրման առումով: Իսկ իրանական «Թեբրիզնեւսի.քոմ» կայքի տեղեկացմամբ՝ Իրանը Ադրբեջանի սահմանին՝ Նորդուզ շրջանի Ուչ Դիբին գյուղի մերձակայքում, ծանր զրահատեխնիկա է տեղակայել՝ ուղղված դեպի Ադրբեջան: Կայքը գրել է, որ Իրանի այդ քայլը պայմանավորված է «երկրի հյուսիսի նկատմամբ Ադրբեջանի նկրտումներով». «Բացի այդ, հաշվի առնելով Ադրբեջան-ՆԱՏՕ-Իսրայել ջերմացող հարաբերությունները, մանավանդ Իրան-Հայաստան բարեկամությունը, Թեհրանը Բաքվին համարում է ոչ բարեկամական երկիր», գրում է իրանական կայքը:

Հետաքրքրական է պարզել, թե այդ ինչպե՞ս Բաքուն, բացի իր երկակի խաղից, կարողանում է Իսրայելի հետ բարեկամություն անել՝ թուրք-իսրայելական քաղաքական ճգնաժամի ֆոնին, եւ ինչպե՞ս է Անկարան «թույլատրում» եղբորը նման քայլեր: Չէ՞, որ առաջին հերթին հենց Բաքվի բացասական վերաբերմունքից խուսափելու համար Անկարան չտվեց անհրաժեշտ ընթացք հայ-թուրքական հարաբերություններին:

Հ. ԱՓՅԱՆ

# Քրեական գործ Մեքսիկական ծոցի աղտոտման կապակցությամբ

ԱՄՆ գլխավոր դատախազ Էրիկ Հոլդերը քրեական գործ է հարուցել Մեքսիկական ծոցում նավթի արտահոսքի առնչությամբ: Քննիչները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն բնապահպանական աղետի հնարավոր պատասխանատուների գործունեության բոլոր կողմերը եւ պարզեն աղետի նյութական վնասի չափը:

Գլխավոր ամբաստանյալը «Բրիթիշ փեթրոլիում» բրիտանական նավթային ընկերությունն է, որի ղեկավարությունը քննիչների հետ գործակցելու պատրաստակամություն է հայտնել: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

Ինչ վերաբերում է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային, նա երեկ առաջին խորհրդակցությունն է անցկացրել նավթահարթակի աղետի հանգամանքները քննող անկախ հանձնաժողովի համանախագահների հետ: Հանդիպումից հետո Օբաման հայտարարել է, որ քննության արդյունքները ԱՄՆ-ին թույլ կտան ապագայում կանխել նման աղետները:

Օբաման խոստացել է ամեն կերպ աջակցել անկախ հանձնաժողովին: Նախագահի խոսքերով, «Բրիթիշ փեթրոլիումը» պետք է ֆինանսական պատասխանատվության ենթարկվի ԱՄՆ-ի պատմության «խոշորագույն բնապահպանական աղետի» հետեւանքների համար:

Ի դեպ, բրիտանական ընկերությունը նավթահարթակի աղետից՝ ապրիլի 20-ից մինչեւ օրս մոտ 1 մլրդ դոլար է ծախսել՝ փորձելով խցանել վթարված ստորջրյա նավթահորը, բայց նավթի արտահոսքը շարունակվում է:

# Ամենավատ վարորդները Նյու Յորքում են, ամենալավերը՝ Կանզասում

**Նյու Յորքի նահանգի ավտոսիրողները ճանաչվել են ԱՄՆ վատթարագույն վարորդներ: Այս հետեւությունն է արվում GMAC ապահովագրական ընկերության անցկացրած ազգային հետազոտության մեջ:**

**USA Today թերթը նշում է, որ հետազոտության ընթացքում ավտոսիրողները պատասխանել են ճանապարհային երթեւեկությանն առնչվող 20 սովորական հարցերի: Հարցումն անցկացվել է բոլոր 50 նահանգներում եւ Կոլումբիա օկրուգում, որտեղ մայրաքաղաք Վաշինգտոնն է:**

**Առաջադրանքն ամենից լավ կատարել են Կանզասի նահանգի վարորդները: Այնտեղ ճիշտ պատասխանների տոկոսն ամենաբարձրն է՝ 82,3: Ի դեպ, անցյալ տարի համանման հետազոտության ընթացքում կանզասցիները զբաղեցրել էին ընդամենը 4-րդ տեղը: Այս տարի լավագույնների թվում են Հարավային Դակոտայի, Օրեգոնի եւ Մինեսոտայի ավտոսիրողները:**

**Մինչդեռ Նյու Յորքի նահանգում ճիշտ պատասխանների տոկոսը չի անցել 70-ից: Ճանապարհներին իրենց անգիտակից վարքագծով նյույորքցիների հետ կարող են մրցել միայն Նյու Ջերսիի, Կոլումբիա օկրուգի եւ Կալիֆոռնիայի վարորդները:**



**Հետազոտության արդյունքները ցույց են տալիս ամերիկացի վարորդների պրոֆեսիոնալիզմի տագնապալի անկումը: Այսպես, նրանց 85 տոկոսը չգիտե ինչ անել լուսակիրի դեղին ազդանշանի դեպքում, ինչպես նաեւ անտեղյակ է մինչեւ հաջորդ ավտոմեքենան ընկած անվտանգ հեռավորությանը:**

**Լավագույն արդյունքներ դրսեւորում են 45-ից բարձր տարիքի տղամարդիկ: Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում տղամարդ վարորդները կանանցից ավելի զգոն են ղեկի մոտ, նրանցից պակաս չափով են արձագանքում հեռախոսազանգերին եւ այլն, նշում է CBS հեռուստաընկերությունը:**

*ԴԱՄ՝ ՄԵՐՈՆՑ*

# Ճապոնիայի վարչապետը հրաժարական տվեց



**Ճապոնիայի վարչապետ Յուկիո Հատոյաման իր գլխավորած Դեմոկրատական կուսակցության ղեկավարությանը հայտնել է, որ ինքը մտադիր է թողնել պաշտոնը: Վարչապետը համապատասխան հայտարարություն է արել հունիսի 2-ին, նշում է Ֆրանսպրեսը:**

**Հատոյաման իր հրաժարականը պատճառաբանել է իր հանդեպ ժողովրդի վստահության նվազմամբ, քանի որ ինքը չի կատարել Օկինավա կղզուց ամերիկյան օդուժի ռազմակայանը տեղափոխելու նախընտրական խոստումը:**

**Վարչապետի հայտարարությունը երեկ սկսել է քննարկվել խորհրդարանի զույգ պալատների նիստում: Հատոյաման վարչապետի պաշտոնում ընտրվել էր 2009-ի սեպտեմբերին: Այն ժամանակ նրա գործողություններին հավանություն էր տալիս ընտրողների 70 տոկոսը: Անցած 9 ամսում նրա վարկանիշն իջել է 20 տոկոսի:**

**Նախընտրական արշավի ժամանակ Հատոյաման խոստացել էր ԱՄՆ վարչակազմից պահանջել, որ Օկինավայից դուրս բերվի վաղուց բնակիչների դժգոհությունը հարուցող ամերիկյան ռազմակայանը: Սակայն 2009-ի նոյեմբերին Բարաք Օբամայի հետ բանակցելիս նա շրջանցել էր այդ հարցը: Դրա հետեւանքով 2010-ի մայիսի 28-ին որոշվեց ռազմակայանը տեղափոխել Օկինավայի մի շրջանից մյուսը:**

**Ամերիկյան ռազմակայանի հարցում դիրքորոշման արմատական փոփոխության պատճառով Հատոյաման նաեւ զրկվել էր կառավարող կոալիցիայի աջակցությունից:**

# Օդանավում 4 ժամ «մոռացված» ամերիկուհին դատի է տվել ավիաընկերությանը

**Միչիգանի նահանգի 36-ամյա բնակչուհի Ջինջեր Մակգիրը դատի է տվել United Airlines ավիաընկերությանը՝ վայրէջքից հետո իրեն 4 ժամ օդանավում փակված թողնելու համար: Ուղեւորուհին քնած էր մնացել Դետրոյթ-Ֆիլադելֆիա չվերթի ժամանակ եւ այժմ մտադիր է դատական կարգով 25-75 հազար դոլար ստանալ ավիաընկերությունից: Այդ մասին հաղորդում է CNN հեռուստաընկերությունը:**

**Մակգիրը մամլո ասուլիսում պատմել է, որ արթնանալով դատարկ եւ դրսից փակված օդանավում՝ ինքը աննկարագրելի սարսափ է ապրել:**

**Հայցվորի դատապաշտպան Ջեֆրի Ֆիշերի խոսքերով, ավիաընկերությունը մեղադրվում է անձնակազմի անփութության, չկանխամտածված ազատազրկման, բարոյական տառապանքների պատճառման եւ պայմանագրի կետերի խախտման մեջ:**

**Առավոտյան Դետրոյթից թռած օդանավի թռիչքը ինչ-ինչ պատճառներով երկարաձգվել էր. մասնավորապես միջանկյալ վայրէջք էր կատարվել Վաշինգտոնի օդանավակայաններից մեկում: Երկարատեւ ճանապարհորդությունը ըստ երեւույթին հոգնեցրել էր Մակգիրին, որը խոր քուն էր մտել: Ֆիլադելֆիայում վայրէջք կատարած օդանավի ուղեւորները եւ անձնակազմը չէին արթնացրել քնած ուղեւորուհուն, որը 4 ժամով հայտնվել էր «գերության» մեջ:**

**Միայն երեկոյան օդանավի սրահ մտած հավաքարարների շնորհիվ Մակգիրը դուրս էր եկել օդանավից, բայց դրանից հետո էլ «կասկածյալին» պահել էին եւ հարցաքննել:**

**Հայցվորի մյուս դատապաշտպանը՝ Ջեյմս Հարինգտոնը կարծում է, որ միջադեպի միակ բացատրությունը անձնակազմի ծուլությունն է եւ անփույթ վերաբերմունքը:**

# «Հիբրիդներից» դեպի էլեկտրական մարտկոցներով ավտոմեքենաներ

Լայնորեն ազդարարված «Շեւրոլե-վոլտ» տեսակի նոր ավտոմեքենաները, որոնք մինչեւ 40 մղոն (1 մղոն = 1,6 կմ) կարող են գնալ տանը լիցքավորված մարտկոցներով, արդեն այս տարվա վերջերին վաճառքի կհանվեն, տեղեկացնում է «U. S. News and World Report» պարբերականի ապրիլյան համարը: Դրանց հետեւելու են «Նիսան լիֆը», որը մինչեւ 100 մղոն է խոստանում, եւ «Տոյոտա-Պրիուսը», որն իր մեջ մարտկոցները վերալիցքավորելու հարմարանք է ունենալու:

Սրանք ավտոմեքենաշինության ասպարեզի այն նորություններն են, որոնց մասին տասնամյակներ շարունակ երազում էին եւ պայքարում մթնոլորտի մաքրության կողմնակիցները ու բենզինի այլընտրանքային տարբերակներ որոնողները: Նրանք այժմ լայն օժանդակություն են ստանում Օբամայի կառավարության կողմից, որ խոստացել է սուբսիդավորման միջոցով աջակցել էլեկտրական մարտկոցներով աշխատող ավտոմեքենաներ արտադրողներին: Մի շարք քաղաքներում արդեն սկսել են մշակել մարտկոցներ վերալիցքավորելու կայաններ կառուցելու ծրագրեր: Անշուշտ, առաջին արտադրանքները կարող են թանկ արժենալ: Այդ պատճառով էլ ավտոգործարանները առայժմ «հիբրիդ» ավտոմեքենաներ են արտադրում, որոնք կարող են աշխատել ինչպես բենզինով, այնպես էլ մարտկոցով: Այս ավտոմեքենաները ունեն այն առավելությունը, որ մեքենաների տերերը կարող են որոշել որ վառելիքը օգտագործել ավելի շատ՝ ելնելով տարբերակների գներից: Մասնագետները հաշվել են, որ մարտկոցներով ավելի էժան է լինելու, քանի որ դրանք կարելի է վերալիցքավորել գիշերային ժամերին, երբ էլեկտրաէներգիան համեմատաբար էժան է:

Խնդիրներից մեկն այն է, որ, ըստ որոշ տեխնիկների, վերջին շրջանում «Տոյոտայի» ամրակների հետ կապված թերությունները հնարավոր է առնչվում էին էլեկտրականությանն անցնելուն: «Տոյոտան» եւ «Հոնդան» 1990-ականներին էին սկսել «հիբրիդներ» արտադրել: ԱՄՆ-ում «Հոնդա Ինսայթն» ու «Պրիուսը» հայտնվեցին 2000-ին: Երկտեղանի «Ինսայթը» տարօրինակ ու «անգործնական» թվաց, «Պրիուսը»՝ դանդաղ եւ անապահով: «Տոյոտան» մոտ մեկ տասնամյակ աշխատել է կորստով: «Ջեներալ մոթորսը», որ նախկինում դեմ էր «հիբրիդների» գաղափարին, այժմ ողջունում է: Ներկայիս «հիբրիդները» շուկայի 3 տոկոսն են կազմում, բայց մինչեւ 2015-ը նախատեսվում է, որ հասնի 9 տոկոսի: Իսկ էլեկտրական մարտկոցներով աշխատողները հավանաբար առավել գործածական կդառնան 2020-ին, երբ դրանց գները համեմատաբար առավել մատչելի կդառնան, իսկ նոր տեխնոլոգիան՝ առավել վստահելի ու ապահով: Կարեւոր է նաեւ մարդկանց մտայնության փոփոխությունը եւ նոր տարբերակի ընդունումը:

Հ. Ծ.

AZG NEW PDF.qxd 02/06/2010 21:59 Page 1



# Ռուբեն Հախվերդյան. «Մեր երգարվեստի դժբախտությունը Երգի պետական թատրոնն է»

Երգահան **Ռուբեն Հախվերդյանն** ու երաժիշտ **Չիկոն** (Արմեն Թութունջյան) երեկ «Հայելի» ակումբում ի պատասխան լրագրողների զանազան հարցերի անդրադարձան նույնքան զանազան թեմաների՝ «Եվրոտեսիլ» նայել-չնայելու, նույն մրցույթին մասնակցել-չմասնակցելու, օտար լեզուներին տիրապետելու ձեւ ու չափի, ջազ լսող ու չլսող մեր քաղաքի եւ այլ հարցերի:




Ու եկան եզրահանգման, որ «Եվրոտեսիլին» մասնակցել պետք է, բայց նայել, հետեւել երգի այդ մրցույթին պարտադիր չէ՝ կարելի է առավել հաճելի եւ օգտակար զբաղմունք գտնել: «Մեզ պետք չէ շեղել, մենք ավելի կարեւոր գործեր ունենք, քան այդ մշակութային քաղաքականությունը, մանավանդ, որ այն չկա էլ»,- եզրակացրեց Ռուբեն Հախվերդյանը: Չիկոն վստահություն հայտնեց. «Մշակութային քաղականություն մշակելու եւ իրականացնելու համար հարկ է հասարակություն կրթել, իսկ մեր կրթական համակարգը թերի է: Դասավանդում եմ կոնսերվատորիայում: Թող մեր խղճուկ աշխատավարձերը չբարձրացնեն, բայց ուսուցումն անվճար լինի, որ վատ սովորող, անտաղանդ ուսանողին կարողանանք դուրս թողնել»: Դե իսկ երգարվեստի կաղության առանցքային պատճառը, ըստ Ռուբեն Հախվերդյանի, հայերենի շեշտադրությունն աղավաղելն է. «Հայերեն երգը նախ հայերեն բառն է: Ու երգում հայերենը չպետք է կաղա, բայց կաղում է շեշտի աղճատումով: Մեր երգարվեստի հաջորդ դժբախտությունը Երգի պետական թատրոնն է, որի անունը դրել եմ՝ «Ես այնքան կուզեի ամերիկացի լինել»: Պետք չէ Սթինգից ավելի Սթինգ լինել, դա ի վերջո օտար արվեստ է: Հասկացանք՝ գիտենք այդ լեզուն, բայց կարծես ռուսաքծնանքով ենք զբաղված: Ոնց որ Ալլա Պուգաչովային Մեսրոպ Մաշտոց շքանշան տվեցին: Մեր լեզուն է մեր հայրենիքը, սարերը չեն, լանդշաֆտը չի: Մնացել է մեր լեզուն էլ ծախենք, ու մենք լիովին ռուսներինը կլինենք»: Երգարվեստի կաղության հարցում համկարծություն հայտնելով Չիկոն հակադարձեց Ռուբեն Հախվերդյանին. «Ռուբոն երեւի մոռացել է, ինչքան ռուսերեն գրքեր ա կարդացել»:

Իր իսկ խոսքով, համաշխարհային գրականությանը ռուսերենի իմացության շնորհիվ ծանոթ Ռուբեն Հախվերդյանը անդրադարձավ նաեւ շրջանառվող երաժշտության տեսակին ու որակին. «Քաղաքը ջազ է լսում», լավ, բայց ի՞նչ որակի, ով է հարցնում: Կարծում եմ, Թուրքիայի հետ երաժշտության սահմանները բաց են: Ու էդ խեղճ թուրքերի երգերը գողանում, հայերեն բառեր են կցմցում, երգում»: Ու էս հարցում Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահի ջազ լսելու փաստը ճաշակ թելադրել-ձեւավորելուն բանախոսների կարծիքով չէր նպաստում, քանի որ ըստ Չիկոյի իմիջի հարց էր, ըստ Ռուբեն Հախվերդյանի՝ կառավարական ջազ:

Ն. Պ.

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

# 56 դպրոցների սաների 150-ից ավելի գործեր՝ մեկ ցուցահանդեսում

Հայաստանի բոլոր մարզերից արվեստի 56 դպրոցների ու խմբակների սաների ավելի քան 150 գործեր հունիսի 2-ից 9-ը կցուցադրվեն Նկարիչների միության վերին սրահում: Ցուցահանդեսի բացման օրը սրահը մարդաշատ էր՝ գործերն էլ արեւոտ, որոնցում գերակշռում էին բնապատկերները, իսկ հնչող երաժշտությունը՝ (Աստոր Պիացոլա, Արամ Խաչատրյան) կենդանի Նոր անուններ բարեգործական հիմնադրամի քառյակի կատարմամբ: Եւ եթե մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը** բացման խոսքում նշեց, որ զարմանալի ոչինչ չի տեսնում տաղանդաշատ երեխաների բազմաքանակ լինելու մեջ ու կարեւոր է համարում նմանատիպ ցուցահանդեսները բացահայտումների տեսանկյունից, ապա ցուցահանդեսի կազմակերպիչ **Դավիթ Դավթյանն** հավաստիացրեց, որ ցուցադրության են ներկայացվել ոչ բոլոր արժանի գործերը, քանի որ տարածքային հնարավորությունները եղել են թելադրող եւ սահմանափակ: Նրա խոսքով՝ եկող տարի ցուցահանդեսը կլինի առավել լայնամասշտաբ եւ հիմք կտա մշակույթի նախարարությանը լավագույններին միջազգային մրցույթներին մասնակից դարձնելու, ինչը իր հերթին հավաստեց նաեւ փոխնախարարը:

Իսկ ցուցահանդեսում որպես հեղինակ հանդես եկած 6-16 տարեկան երեխաները իրենց գործերը մայրաքաղաքում ներկայացնելուն ոչ միայն ոգեւորությամբ, այլեւ պատասխանատվությամբ էին մոտենում:

«Չգիտեմ ինչ կասեն իմ ներկայացրած գյուղական թեմայով նկարի մասին: Ուզում եմ, որ դուր գա»,- ասաց 11-ամյա **Մարի Մելքումյանը**, որ չնայած բարձր ջերմությանը հարկ էր համարել ներկա գտնվել ցուցահանդեսի բացմանը ու պատմել Ագարակի արվեստի դպրոցի արդեն մեկ տարի գործող նկարչության խմբակի ու սիրելի ուսուցչի՝ Մուշեղ Համբարձումյանի մասին, որը 30-ից ավել սան ունի:

Արմավիրի մարզի ավեստի դպրոցի սաներն էլ 15-ամյա **Շուշան Հարությունյանը,** 16-ամյա **Մարիա Հակոբյանն** ու 9-ամյա **Օվսաննա Բաղումյանն** էլ, որոնց նկարչություն է դասավանդում Ազատուհի Եղիազարյանը, ցուցահանդեսին մասնակցելու ոգեւորության մասին խոսեցին ու հավաստեցին. «Երեւանում առաջին անգամ են ցուցադրվում մեր նկարները, հիմա գիտենք, որ ավելի լավ պիտի նկարենք. եկող տարի էլ լինելու է ցուցահանդես ուզում ենք պարտադիր մասնակցել»:

Մարտիրոս Սարյանի անվան գեղարվեստի դպրոցի սան 12-ամյա **Թամարա Սարգսյանը**, որի «Ընտանիք» կոչված գործն է ցուցադրվում, արդեն մտածում է նոր մի բան նկարելու մասին ուսուցչուհուն՝ Ալինա Ղազարյանին էլ զարմացնելու համար: Վերջինս փաստեց. «Նման ցուցադրությունները նպաստում են նոր թափով ու ոգեւորությամբ աշխատելուն»:

Իսկ Դավիթ Դավթյանը ներկայացված գործերին եւ մարզերի արվեստի դպրոցներում կատարվող աշխատանքի հակիրճ գնահատական տվեց. «Որտեղ լավ մասնագետ, այնտեղ էլ՝ լավ գործեր»:

Ն. Պ.

# «Արմմոնո» թատերական փառատոնը բացվեց Կապանում

**«Արմմոնո» թատերական փառատոնի 2-րդ փուլին, որը մեկնարկեց Սյունիքի մարզի Կապան քաղաքում, անհամբերությամբ սպասում էին սյունեցիները: Ավանդույթը չխախտելով, մարզի Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում, հանդիսավոր պայմաններում փառատոնը հայտարարվեց բացված: Փառատոնի մասնակիցներին ողջույնի ուղերձ էր հղել Կապանի քաղաքապետ Արթուր Աթայանը, որով հույս էր հայտնել, որ նման փառատոները կլրացնեն հետպատերազմյան տարիների կորուստը: «Կասկած չկա, որ այս փառատոնն էլ ավելի կաշխուժացնի մեր մարզի թատերական կյանքը՝ դրական լիցքեր հաղորդելով յուրաքանչյուրիս»:**

**Փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը մարզի ղեկավարության անունից ողջունեց փառատոնի մասնակիցներին ու նշեց, որ Կապանի թատրոնը մեծ դերակատարում է ունեցել տեղի հասարակության կյանքում, սերունդների դաստիարակության ու սերը դեպի արվեստը սերմանելու հարցում: «Կապանի փոքրիկ, բայց մեծ հոգով թատրոնը շատ հայտնի դերասաններ է տվել, որոնք համալրել են հանրապետության թատրոնները: Մեր թատերասեր հանդիսատեսը արժանի է հաղորդակցվելու դերասանական լավագույն ուժերին, որոնք այսօր փառատոնի շրջանակներում հյուրընկալվել են մեր մարզ, որտեղ նրանց ոտատրոփ ու գրկաբաց սպասում էին»:**

**Փառատոնի մեկնարկը ողջունեց ՀԹԳՄ նախագահի, Կապանի պատվավոր քաղաքացի, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հակոբ Ղազանչյանը եւ շնորհակալություն հայտնեց հյուրընկալ մարզին ու ղեկավարներին «Արմմոնո» փառատոնը կրկին իրենց մարզում անցկացնելու համար: Այնուհետեւ ներկաները հոտնկայս մեկ րոպե լռությամբ, հետո երկարատեւ ծափերով հարգեցին Կապանի թատրոնի անվանի դերասան Վազիկ Սարգսյանի հիշատակը, որի մահվան 40 օրը համընկել էր փառատոնի բացման հետ:**



## Կապանի թատրոնը 75 տարվա պատմություն ունի

**Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը այս տարի տոնում է իր հիմնադրման 75-ամյակը: Հոբելյանական տարվա առիթով ՀԹԳՄ նախագահ Հակոբ Ղազանչյանը անդրադառնալով թատրոնի անցած կարեւոր ու դաստիարակչական ուղուն, նշեց, որ աշնանը հանդիսավոր պայմաններում կնշվի այդ հոբելյանը: Իսկ մինչ այդ «մարզային թատրոնների պահպանման, զարգացման գործին մատուցած ծառայությունների եւ թատրոնի հոբելյանի առիթով ՀԹԳՄ ոսկե մեդալով պարգեւատրվեց դերասան Արտավազդ Գրիգորյանը: Վերջինս պարգեւը ստանալով, շնորհակալություն հայտնեց ու նշեց. «Հավատացնում եմ, որ այս մեդալը միայն իմը չէ, ես այն կիսում եմ իմ հարազատ թատրոնի կոլեկտիվի, իմ շատ սիրելի հանդիսատեսի հետ ու սիրով այն կկրեմ»: Արտավազդ Գրիգորյանը թատերարվեստում է 33 տարի: Ավարտելով Երեւանի թատերական ինստիտուտի Երվանդ Ղազանչյանի ղեկավարած դերասանական կուրսը, գործուղվել է Ղարաբաղի այն ժամանակվա Մաքսիմ Գորկու անվան թատրոն որպես դերասան, իսկ 1979-ին տեղափոխվել է Կապանի թատրոն: «Ազգի» այն հարցին, թե թատրոնը ի՞նչ տեղ ունի իր կյանքում, ասաց. «Թատրոնը իմ առաջին ու անդավաճան սերն է, իհարկե այդ հարցում նաեւ կա իմ մանկավարժ տիկնոջ՝ Հռիփսիմե Ազատյանի լուման»:**

**«Արմմոնո» փառատոնի նախագահ Մարիանա Մխիթարյանի ողջույնի ու շնորհակալական խոսքից հետո փառատոնը բացվեց Արթուր Սահակյանի բեմադրած «Լույսը կբացվի» (ըստ Կարինե Խոդիկյանի) մոնոներկայացումով: Իր փայլուն դերասանական խաղով հանդիսատեսի երկարատեւ ծափերին արժանացավ դերասանուհի Կարինե Ջանջուղազյանը, որ մոտ մեկ ժամ հանդիսատեսին լարված եւ ուշադիր պահեց բեմին:**

## «Արմմոնոն» Սյունիքում կհյուրընկալվի հաջորդ տարի

**«Ազգն» արդեն անդրադարձել էր թատերական փառատոնին մասնակցող թատերախմբերին, որոնք մեկ շաբաթ սյունեցի հանդիսատեսին, Գորիսում եւ Կապանում զուգահեռաբար ներկայացրին 14 մոնոներկայացումներ: Իհարկե եղան եւ հաջողված եւ չհաջողված գործեր: Առաջինին ծափահարում էին հոտնկայս, ծաղկեփնջեր նվիրում, իսկ չհաջողվածին՝ դահլիճում 15 շունչ կար, որից 13 երեխաներ, որոնք «քորուփոշման» իրենց ծաղկեփունջը հետ տարան, դահլիճը լքելով: Համենայնդեպս, ներկաները հույսով սպասում են հաջորդ փառատոնին, որը կազմակերպված կլինի ՀԹԳՄ-ի Սյունիքի մարզի ղեկավարության եւ Կապանի քաղաքապետ Արթուր Աթայանի աջակցությամբ ու հովանավորությամբ:**





ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Կապան-Երեւան

AZG NEW PDF.qxd 02/06/2010 21:58 Page 1



# Առաջին լուրջ հաջողությունը նոր մարզաձեւում

Հայաստանի տոնանդո թայիիբոքսինգ ֆեդերացիան թեեւ միայն այս տարվա հունվարի 3-ին է հիմնվել, սակայն մարզաձեւի ներկայացուցիչներն արդեն առաջին նշանակալի հաջողությանն են հասել: Այս մասին երեկ «Փաստարկ» ակումբում կայացած մամուլի ասուլիսում տեղեկացրեց ֆեդերացիայի նախագահ **Սամվել Սահակյանը**:



Մեր մարզիկները մեծ հաջողության են հասել Թբիլիսիում կայացած Կովկասի գավաթի բաց առաջնությունում, որին մասնակցում էին նաեւ Վրաստանի, Իրանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի հավաքականները: Առանձին թիմով մասնակցեց նաեւ ԼՂՀ-ն: Թեեւ Ադրբեջանի պատվիրակության բողոքին, մրցաշարում բարձրացվեց նաեւ ԼՂՀ-ի պետական դրոշը:

Ֆինանսական սուղ միջոցների պատճառով Հայաստանից մրցաշարին մասնակցեցին 3, ԼՂՀ-ից՝ 2 մարզիկներ: Չնայած դրան, մեր բոլոր 5 մարզիկներն էլ տուն վերադարձան մեդալներով (4 ոսկե, մեկ արծաթե): Մինչեւ 13-14 տարեկանների մրցաշարում գերազանց հանդես եկավ 45 կգ քաշային Մարզպետ Պողոսյանը, որը 3 գոտեմարտերում էլ հաջորդաբար պարտության մատնելով իրանցի, վրացի եւ ադրբեջանցի մարզիկներին, ոսկե մեդալի արժանացավ: Նա իր պարգեւով ներկա էր ասուլիսին: Պասանի մարզիկը նշեց, որ շատ ուրախ է հաղթանակի առթիվ, որ կարողացավ բարձր պահել Հայաստանի մարզական պատիվը եւ ի նշան հաղթանակի, Թբիլիսիում վեր խոյացավ հայկական եռագույնը:

Ոսկե մեդալներով տուն վերադարձան նաեւ Սուրեն Մանուչարյանը (12-13 s., 50 կգ), արցախցիներ Դավիթ Խաչատրյանը (9-10 s., 50 կգ), արցախցիներ Դավիթ Խաչատրյանը (9-10 s., 50 կգ) եւ Գարեգին Աղաբալյանը (18-ից բարձր, 70 կգ): Ի դեպ, վերջինս նաեւ Արցախի տոնանդո թայիիբոքսինգի ֆեդերացիայի նախագահն է: Վարդան Պողոսյանը (60 կգ) մինչեւ 14-15 տարեկանների մրցաշարում դարձավ արծաթե մեդալակիր:

Թիմային հաշվարկով Հայաստանը գրավեց 3-րդ տեղը: Հաղթող ճանաչվեցին Իրանի մարզիկները, 2-րդ տեղը գրավեց Վրաստանի հավաքականը: Մեր մրցակիցները հանդես էին գալիս մեծ թվով մարզիկներով, ուստի թիմային հաշվարկում գերազանցեցին Հայաստանի հավաքականին:

Սամվել Սահակյանը նշեց, որ Թբիլիսիի ուղեւորությունը հնարավոր դարձավ Դիլիջանի քաղաքապետարանի, Տավուշի մարզպետարանի եւ Հաղարծնի գյուղապետարանի աջակցության շնորհիվ: Հունիսի 20-ին Երեւանում կանցկացվի Հայաստանի գավաթի բաց խաղարկությունը, որին կմասնակցեն շուրջ 150 մարզիկներ տարբեր ակումբներից: Այսօր Հայաստանում մարզաձեւով զբաղվողների թիվը մոտ 800 է: Տոնանդո թայիիբոքսինգն իր յուրօրինակ ոճն ունի: Այստեղ ավելի շատ են հարվածները ծնկով, ոտքերի թաթով: Այն ավելի մոտ է պրոֆեսիոնալ ոճին, որում թույլատրվում է հանդես գալ 18-ից բարձր տարիք ունեցող մարզիկների: Ուստի տարիքային ցածր խմբերի մրցումներում օգտագործվում են պաշտպանիչներ՝ վնասվածքներից խուսափելու համար: Մարզաձեւի ֆեդերացիան առաջիկայում մի շարք ծրագրեր կիրականացնի, որոնք կնպաստեն մեր մարզիկների պատրաստվածության բարձրացմանը, հանրապետությունում տոնանդո թայիիբոքսինգի մասսայականացմանը:

# Սողեռլինգը փակեց Ֆեդեռերի ճանապարհը

**Թենիսի «Ռոլան Գարոսի» քառորդ եզրափակիչի գլխավոր անակնկալը շվեյցարացի Ռոջեր Ֆեդեռերի պարտությունն էր շվեդ Ռոբին Սոդեռլինգից: Առաջին խաղափուլն ավարտվեց Ֆեդեռերի հաղթանակով (6-3), իսկ ահա մյուս երեք խաղափուլերում հաջողությունն ուղեկցեց Սոդեռլինգին (6-3, 7-5, 6-4):**

**Նշենք, որ Սոդեռլինգն ու Ֆեդեռերը նախորդ տարի մրցել էին «Ռոլան Գարոսի» մրցաշարի եզրափակիչում: Այն ժամանակ հաղթել էր Ֆեդեռերը: Եվ ահա շվեդ թենիսիստը յուրօրինակ ռեւանշ վերցրեց: Վերջին անգամ Ֆեդեռերին չէր հաջողվել «Ռոլան Գարոսում» կիսաեզրափակիչ մտնել 2004-ին: Այն ժամանակ նա պայքարից դուրս էր մնացել 3-րդ փուլից:**

**«Ինձ անհանգստացնում է այն փաստը, որ հողածածկույթով կորտերում 3 հանդիպում տանուլ եմ տվել անձրեւի ուղեկցությամբ: Ընդմիջումից հետո, երբ կորտի պայմանները վատթարացան, Սոդեռլինգը սկսեց շատ լավ խաղալ: Իհարկե, երկուսիս համար էլ պայմանները նույնն էին: Հարգում եմ բոլոր թենիսիստներին, սակայն եկեք անկեղծ լինենք. կարող եմ ցանկացածին հաղթել: Զգում էի, որ գտել եմ խաղս հողածածկույթով կորտի վրա, երբ ժամանել էի Մադրիդ: Գոհ էի իմ ելույթներից նաեւ այստեղ: Կարծում եմ, այս պարտությունը թեթեւ կտանեմ ու կնախապատրաստվեմ առաջիկա մրցաշարերին», նշել է Ռոջեր Ֆեդեռերը:**

**«Երբ լավ մարզավիճակում եմ, եղանակն ինձ համար խոչընդոտ չէ: Նման պայմաններում արդեն խաղացել էի: Ֆեդեռերը հաղթելու հնարավորություն ուներ 2-րդ խաղափուլում: Բայց երբ հաղթեցի 2-րդ խաղափուլում, զգացի, որ կարող եմ մի փոքր թուլանալ: Հետո ավելի ու ավելի լավ հանդես եկա: Սա մեծ հաղթանակ է: Բայց այն երկար տոնել չեմ պատրաստվում: Հարկավոր է առաջ շարժվել», հայտարարել է Ռոբին Սոդեռլինգը:**

**Կիսաեզրափակիչում Սոդեռլինգը կմրցի չեխ Թոմաշ Բերդիխի հետ: Վերջինս քառորդ եզրափակիչում հաղթեց ռուսաստանցի Միխայիլ Յուժնուն (6-3, 6-1, 6-2):**

**Կանանց մրցաշարում եւս հայտնի դարձան կիսաեզրափակիչի առաջին երկու մասնակիցները: Իտալուհի Ֆրանչեսկա Սկյավոնեն պարտության մատնեց դանիացի Կարոլին Վոզնյացկուն (6-2, 6-3): Ռուսաստանցիներ Ելենա Դեմենտեւայի եւ Նադեժդա Պետրովայի մրցախաղն ավարտվեց առաջինի հաղթանակով (2-6, 6-2, 6-0):**

# Մոուրինյուն անցավ պարտականությունների կատարմանը

**Պորտուգալացի մասնագետ Ժոզե Մոուրինյուն քառամյա պայմանագիր է կնքել Մադրիդի «Ռեալի» հետ, որից հետո ներկայացվել է հանրությանը: Ակումբի մարզական տնօրեն Խորխե Վալդանոն հայտարարել է, որ իրենց համար մեծ պատիվ է աշխարհահռչակ մարզիչ ունենալը: Իր հերթին Մոուրինյուն հայտարարել է, որ «Ռեալ» տեղափոխվելու հիմնական պատճառը նոր բարձունքներ նվաճելու ցանկությունն է:**

**Մադրիդի «Ռեալը» վերջին անգամ չեմպիոնների գավաթակիր է դարձել 2002-ին, իսկ Իսպանիայում չեմպիոնի տիտղոսը նվաճել է 2008-ին: Բնականաբար, Ժոզե Մոուրինյուի առջեւ խնդիր է դրվելու վերադարձնել «Ռեալի» նախկին փառքը: Ակումբում հույս ունեն, որ Մոուրինյուի գլխավորությամբ «Ռեալը» կնվաճի չեմպիոնների գավաթը:**

**Մոուրինյուն ժամանակին աշխատել է Իսպանիայում: Նա սկզբում Բոբի Ռոբսոնի, այնուհետեւ Լուի վան Գալի օգնականն էր «Բարսելոնում»: Հետո նա գլխավորեց «Պորտոն», որը 2003-ից դարձավ ՈւԵՖԱ-ի գավաթակիր, իսկ հաջորդ տարի նվաճեց չեմպիոնների գավաթը: Այնուհետեւ Մոուրինյուն տեղափոխվեց «Չելսի»: Արդեն առաջին մրցաշրջանում նա «Չելսիին» չեմպիոնական բարձունքին հասցրեց: Դա վերջին 50 տարում «Չելսիի» առաջին չեմպիոնությունն էր: Հաջորդ մրցաշրջանում «Չելսին» կրկին ուժեղագույնը ճանաչվեց Անգլիայում: Սակայն չեմպիոնների լիգայում հաջողությունը երես թեքեց Մոուրինյուի սաներից, որոնք 2 անգամ կիսաեզրափակիչում զիջեցին «Լիվերպուլին»: 2007/08-ի անհաջող մրցաշրջանից հետո Մոուրինյուն հեռացավ «Չելսիից»՝ գլխավորելով «Ինտերը», որի հետ այս տարի եռակի հաջողության հասավ:**

**Բնականաբար, նոր մարզիչը թիմում սելեկցիոն աշխատանք կծավալի՝ հրավիրելով նոր ֆուտբոլիստների: Նա ցանկանում է թիմի կազմում տեսնել «Արսենալի» հարձակվող Սեսկ Ֆաբրեգասին, «Չելսիի» խաղացողներ Ֆրենկ Լեմփարդին ու Էշլի Քոուլին: Երեք ֆուտբոլիստների հրավիրման համար Մոուրինյուն պատրաստ է 100 մլն ֆունտ ստեռլինգ ծախսել:**

**Ի դեպ, Ֆաբրեգասով հետաքրքրվում է նաեւ «Բարսելոնը»: «Արսենալը» նրա համար 50 մլն ֆունտ ստեռլինգ է պահանջում: Սակայն «Բարսելոնի» նախագահ Խուան Լապորտան հայտարարել է, որ 30 մլնից ավելի գումար չի վճարի:**

**Պորտուգալացի մարզիչը խոսել է նաեւ «Ռեալի» խորհրդանիշը համարվող Ռաուլի հետ, որն ավարտված առաջնությունում ոչ միշտ էր տեղ գտնում թիմի կազմում: Մոուրինյուն նշել է, որ մեծ հարգանքով է վերաբերվում Ռաուլին, ուստի պետք է անկեղծ լինի հետը: Ռաուլի հետագա ճակատագրի հարցը Մոուրինյուն դեռ պետք է քննարկի ակումբի ղեկավարության հետ:**



# Հայ շախմատիստուհիների հաղթական օրը

**Շախմատի Մայա Չիբուրդանիձեի անվան գավաթի խաղարկությունում հիանալի է հանդես գալիս Լիլիթ Գալոյանը, որը 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով, 5 միավորով ընդգրկվեց առաջատարների շարքում: 7-րդ տուրում նրա մրցակցուհին ադրբեջանցի Նարգիզ Ումուդովան էր: Այժմ Գալոյանը Նինո Բուցիաշվիլու, Մակա Պուրցելաձեի, Լելա Ջավախիշվիլու, Միրանդա Միկաձեի, Նինո Խուրցիձեի եւ Բելա Խոթենաշվիլու հետ բաժանում է 2-8-րդ տեղերը:**

**Մրցաշարում հաղթելու լավ հնարավորություն ունի Աննա Մուզիչուկը, որը պարտության մատնելով Գուլնար Մամադովային, վաստակեց 6,5 միավոր: Վերջին 2 տուրերում Մուզիչուկին անհրաժեշտ է 1 միավոր վաստակել: 8-րդ տուրում նա կմրցի Նինո Բացիաշվիլու հետ, իսկ Լիլիթ Գալոյանի մրցակիցը կլինի Նինո Խուրցիձեն:**

**Առաջատարներին ընդհուպ մոտեցավ Մարիա Գեւորգյանը: Երիտասարդ շախմատիստուհին սեւերով հաղթեց Ինգա Խուրցիլավային ու 4,5 միավորով ընթանում է 17-րդ տեղում: Լիա Մարտիրոսյանը 3 միավորով 39-րդն է: Նա հաղթեց Մայա Մումլաձեին:**

# Արոնյանը կմասնակցի Լեոնի մրցաշարին

**Որոշ դադարից հետո Լեւոն Արոնյանը կրկին կնստի խաղասեղանի շուրջը: Նա կմասնակցի հունիսի 4-6-ն իսպանական Լեոն քաղաքում կայանալիք արագ շախմատի ավանդական մրցաշարին: Արոնյանի մրցակիցները կլինեն Իսրայելը ներկայացնող Բորիս Գելֆանդը, կուբացի Լենիեր Դոմինգեսը եւ իսպանացի Ֆրանսիսկո Վալյեխոն:**

# Հայ լրագրողներն ուժերը փորձեցին կանաչ դաշտում



**Հայաստանի լրագրողների ֆուտբոլային թիմն օրերս վերադարձավ Լիտվայի Դրուսկինինկայ քաղաքից, որտեղ մասնակցում էր ԱՊՀ եւ Բալթյան երկրների լրագրողների միջազգային մրցաշարին: Հայ գրչի վարպետները, ովքեր մեկնել էին Լիտվա ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի եւ ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանի հովանու ներքո, մրցումներում 11 թիմերի միջեւ գրավեցին 7-րդ տեղը: Մրցաշարում, բացի հայ թղթակիցներից, մասնակցում էին ԶԼՄ-ների ներկայացուցիչներ Վիլնյուսից (Լիտվա), Բրյանսկից (Ռուսաստան), Կաունասից (Լիտվա), Լուցկից (Ուկրաինա), Մոսկվայից (ՆՏՎ+ հեռուստաընկերություն), Գլազգոյից (Շոտլանդիա), Մինսկից (Բելառուս), Ռիգայից (Լատվիա), Վարշավայից (Լեհաստան) եւ Դրուսկինինկայից (Լիտվա): Մրցաշարի պայմանները խիստ էին. խաղերն անցան մեկ օրվա ընթացքում՝ մայիսի 29-ին, մասնակից թիմերը հանդիպեցին միմյանց հետ շրջանաձեւ մրցակարգով: Այնուհետեւ տեղի ունեցան խաղեր 1-ին , 3-րդ, 5-րդ, 7-րդ եւ 9-րդ տեղերի համար: Հայ լրագրողները մրցաշարում կարողացան պարտության մատնել Բելառուսին՝ 4-1, Լեհաստանին՝ 3-0, Լատվիային՝ 2-1 եւ Դրուսկինինկային՝ 1-0, տանուլ տվեցին մնացած խաղերը: Իսկ 7-րդ տեղի համար պայքարում դիպուկ կատարելով 11 մետրանոց հարվածները՝ պարտության մատնեցին Բելառուսի լրագրողներին:**

**Հայ գրչի վարպետներին շատ դժվար էր անցնել այդ ֆուտբոլային մարաթոնը փոքրաթիվ կազմով՝ համալրված տեղի հայ համայնքի ներկայացուցիչներով եւ լիտվացի լրագրողներով: Այնուամենայնիվ, նրանց հաջողվեց աղյուսակում տեղ զբաղեցնել միջին հորիզոնականում: Պետք է նշել, որ մրցումների ամբողջ ընթացքում հայ լրագրողները ՀՀ Սփյուռքի նախարարության շնորհիվ գտնվում էին Լիտվայի հայ համայնքի ուշադրության կենտրոնում: Այստեղ տեղին է նշել Բալթյան երկրների հայ համայնքի ղեկավար Արայիկ Թունյանին եւ Դրուսկինինկայում գտնվող «Երեւան» սրճարան-հյուրանոցի տնօրեն Մարտին Գասպարյանին:**

**Մրցանակաբաշխության արարողության ժամանակ հայ թղթակիցները նվերներ հանձնեցին մասնակից թիմերին՝ այդ թվում եւ Դրուսկինինկայի քաղաքապետին՝ Երեւանի կոնյակի գործարանի արտադրանքի տեսքով:**

**Մրցաշարի կազմակերպիչն էր Լիտվայի ժուռնալիստների միությունը:**

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ լրագրողների թիմի ավագ

# Նոր տուփ ՖԻՖԱ-ի գավաթի համար

**Ֆրանսիական հանրահայտ Louis Vuitton ֆիրման Փարիզում ներկայացրել է աշխարհի առաջնության գլխավոր մրցանակի՝ ՖԻՖԱ-ի գավաթի համար նախատեսված նոր տուփը: Այն հանրությանն է ներկայացրել լեգենդար մոդել Նաոմի Քեմփբելը: Նման տուփ առաջին անգամ է պատրաստվում: Նախկինում ՖԻՖԱ-ի գավաթը տեղափոխում էին երկաթյա հատուկ արկղով կամ նույնիսկ մարզական պայուսակով:**



**Սակայն վերջերս ՖԻՖԱ-ի ներկայացուցիչները դիմել էին Vuitton ֆիրմային՝ խնդրելով գավաթի համար հատուկ տուփ պատրաստել, որպեսզի ոչ միայն անվտանգ տեղափոխվի մրցանակը, այլեւ առանձնակի շուք հաղորդվի այդ ճանապարհորդությանը:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# 1921 թ. Ադրբեջանի դրոշի բռնի պարտադրումը Արցախին հակամարտության պատճառ դարձավ

«Այսօր Ադրբեջանի ղեկավարությունը պատրանք ունի, թե Ադրբեջանի դրոշի ծածանումը Ստեփանակերտում կմարմնավորի հիմնախնդրի կարգավորումը: Իրականում՝ Ստալինի կողմից 1921 թ. հենց այդ դրոշի բռնի պարտադրումը Արցախին հետագա հակամարտության պատճառ դարձավ», Կանադա այցելության շրջանակներում Քարլթոն համալսարանում ունեցած ելույթում այսպես է Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն անդրադարձել Ադրբեջանի ԱԳ նախարարի՝ Ստեփանակերտում դրոշ ծածանելու հայտարարությանը:



Հունիսի 1-ին տեղի է ունեցել Հայաստանի եւ Կանադայի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի ու Լոուրենս Քեննոնի բանակցությունների երկրորդ փուլը՝ Նալբանդյանի Կանադա այցելության շրջանակներում: Հայաստանի եւ Կանադայի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները մանրամասն քննարկել են հունիսին Կանադայում կայանալիք «Մեծ ութնյակի» եւ «Քսան երկրների խմբի» գագաթաժողովների օրակարգում ընդգրկված հարցերը: Էդվարդ Նալբանդյանը տեղեկացրել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամների ընտրություններում Կանադայի թեկնածությանը սատարելու Հայաստանի որոշման մասին:

Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է նաեւ Կանադայի գիտության եւ տեխնոլոգիաների նախարար Գերի Գուդյերի հետ: Նույն օրը Էդվարդ Նալբանդյանն այցելել է Կանադայի խորհրդարան, ներկա գտնվել Ներկայացուցիչների պալատի նիստին:

Հայաստանի արտգործնախարարը Քարլթոն համալսարանում հանդես է եկել Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ դասախոսությամբ: Անդրադառնալով արցախյան հիմնախնդրի կարգավորման հեռանկարներին՝ Հայաստանի արտգործնախարարը նշել է. «Ուժի օգտագործումը կամ դրա սպառնալիքը չպետք է օգտագործվեն որպես բանակցությունների խաղաթուղթ: Ադրբեջանի ղեկավարության կողմից սուր ճոճելը, ռազմատենչ հայտարարությունները, ազգային թշնամանք սերմանող հռետորաբանությունը ոչ միայն միջազգային իրավունքի խախտում են, այլեւ հակասում են իբր ապագայում Լեռնային Ղարաբաղի բնակչության բարեկեցությունը ապահովելու մտադրության Ադրբեջանի կեղծ խոստումներին»:

Նախարարի խոսքերով. «Ինչ աստիճանի ցինիզմ պետք է ունենալ՝ խոստանալ հոգալ մեկի մասին՝ միաժամանակ սպառնալով սպանել նրան, եթե չհնազանդվի: Հնարավոր չէ հիմնախնդիրը լուծել՝ առաջարկելով հակամարտության պատճառը՝ որպես կարգավորման մեխանիզմ»:

**Ա. Հ.**

# Ջավախքում ընտրությունները բոյկոտել են, մինչդեռ ըստ ԿԸՀ-ի՝ մասնակցությունը 70-75 տոկոս էր

**Մայիսի 30-ին Վրաստանում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցել են ջավախահայության կողմից դրանց փաստացի բոյկոտելու պայմաններում: Այսպիսի հայտարարություն է տարածել «Երկիր» միությունը, որը, ըստ էության, համընկնում է այն ամենին, ինչ արդեն ներկայացրել է «Ազգի» թղթակիցը Ախալքալաքում քվեարկության օրվա իրավիճակի մասին եւ դեռեւս կներկայացնի նախընտրական տրամադրությունները Թբիլիսիում:**

**«Թեեւ ըստ պաշտոնական տվյալների՝ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում արձանագրվեց համապատասխանաբար 70% եւ 75% ընտրողների մասնակցություն, սակայն տեղական եւ միջազգային դիտորդների կարծիքով իրական մասնակցությունը չի գերազանցել 15%-ը: Կեղծված ընտրությունների արդյունքները չճանաչելու մասին հայտարարեցին հայության իրավունքները պաշտպանող ջավախքյան ուժերը», նշված է հայտարարության մեջ:**

**«Երկիր» միությունն ընդգծում է, որ չմասնակցելով ընտրություններին ջավախահայությունն իր վերաբերմունքն արտահայտեց վրացական իշխանությունների կողմից վերջին տարիներին Ջավախքում իրականացվող բռնաճնշումների քաղաքականության նկատմամբ, որոնցից են շինծու մեղադրանքների հիման վրա ջավախահայ ակտիվիստների ապօրինի հետապնդումները, վրացական ուժային կառույցների կողմից Ջավախքի հասարակական-քաղաքական կյանքի փաստացի վերահսկումն ու ուղղորդումը, ջավախահայության իրավունքները պաշտպանող տեղական քաղաքական կազմակերպությունների գրանցման մերժումը եւ այլն:**

**«Վրացական իշխանությունները կեղծելով Ջավախքում ՏԻՄ ընտրությունների արդյունքները՝ էլ ավելի խորացրին ջավախահայության օտարումը Վրաստանի ներքին քաղաքական կյանքից, էլ ավելի մեծացրեցին իրենց եւ ջավախահայության միջեւ գոյություն ունեցող անըմբռնողության անջրպետը», փաստում է «Երկիր» միությունը:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Թուրք-իսրայելական տարաձայնությունները վերաճել են հակասության

*1-ին էջից*

**Ըստ երեւույթին Նաթանյահուի պատճառած զայրույթն այնքան մեծ է եղել, որ երեկ Էրդողանը, ինչպես BBC-ի թուրքական ծառայությունն է վկայում, վերստին սպառնացել է Իսրայելին եւ վիրավորել: Այդ ընթացքում իսրայելական թերթերը գրել են. «Կասեցվեց դեպի Գազա նավարկող օսմանյան նավատորմը»: Ավելին, նախորդ օրը բողոքի ցույց է կազմակերպվել Իսրայելում Թուրքիայի դեսպանատան առջեւ: Ցուցարարները բարձրացրել են «Սադրանքը չի կարող խաղաղություն ապահովելու միջոց լինել», «Ի՞նչ երջանիկ է Թուրքիան, քանի որ կան մահացածներ եւ վիրավորներ» գրությամբ ցուցապաստառներ:**

**Գազայի հատվածի օդից, ծովից եւ ցամաքից շրջափակումը որեւէ արդարացում չունի: Չի կարելի արդարացնել նաեւ «Մեր ուղեգիծը Պաղեստինն է, իսկ բեռը՝ մարդասիրական օգնություն» կարգախոսով եռամյա շրջափակման հետեւանքով հումանիտար աղետի մեջ հայտնված բնակչությանը մարդասիրական օգնության հասցնող ակտիվիստների վրա հարձակումը, առավել եւս նրանց մի մասի սպանությունը:**

**Սակայն չի բացառվում, որ «Ազատության նավատորմիղի» առնչությամբ Իսրայելի կառավարությունը նախապես զգուշացրած լինի Անկարային: Որքան էլ թուրքական «Մավի Մարմարա» նավի վրա հարձակումը իրականացվի միջազգային ջրերում, չի կարելի նաեւ բացառել իսրայելական հատուկ ջոկատի զինվորներին ուղեւորների սառը զենքով դիմադրությունը ու նրանց հետ հաշվեհարդար տեսնելու պնդումների իսկությունը, ինչպես նաեւ նավերի բեռը իսրայելական նավահանգստում ստուգելուց հետո բեռնատարներով Գազա տեղափոխելու հավաստիացումը:**

**Եթե Իսրայելի կառավարությունը դեպի Գազա նավատորմիղի նավարկությունը ընդհատելու առնչությամբ նախապես զգուշացրել է Անկարային, եւ վերջինը մարդասիրական նախաձեռնության ակտիվիստների անվտանգության մասին հոգ տանելու որեւէ քայլ չի կատարել, թույլ տալով, որ նավարկությունն իրականացվի, թուրքական կողմի սադրանքը միանգամայն իրատեսական է դառնում, որը միաժամանակ ենթադրում է «Մավի Մարմարա» նավի ուղեւորների անակնկալ հարձակումը իսրայելական հատուկ ջոկատի զինծառայողների վրա:**

**Համենայն դեպս, նախորդ օրը, երբ միջադեպի առնչությամբ փոխվարչապետ Բյուլենթ Արընչը պարզաբանումներ էր տալիս Թուրքիայի ազգային մեծ ժողովին, ընդդիմության ներկայացուցիչները նրան հենց այդ հարցը տվեցին, թե ինչու կառավարությունը հոգ չի տարել նավատորմիղի անձնակազմի եւ ուղեւորների անվտանգության մասին, իհարկե, որեւէ պատասխան չստացան:**

**Այլ կերպ, Պաղեստինի, առավել եւս Գազայի բնակչության իրավունքների անխոնջ պաշտպանի դերը գուցե կարի թուրք-իսրայելական լարվածությունը, բայց որ Թուրքիան դրանով իսլամականի հետ նաեւ արաբական աշխարհը ղեկավարելու լուրջ հայտ կներկայացնի՝ ակնհայտ է:**

**Ակնհայտ է նաեւ, որ ցամաքից, օդից եւ ծովից շրջափակման պատճառով համակենտրոնացման ճամբարի վերածված Գազայի բնակչության համար կարեւորը ոչ թե իսլամական աշխարհում Թուրքիայի դերակատարությունն է, այլ արտաքին աշխարհի հետ ազատ հաղորդակցվելու, ինչպես նաեւ Այսրհորդանանի հետ հարաբերությունները կարգավորելու հնարավորության ձեռքբերումն է: Հատկապես այն դեպքում, երբ կատարելապես ձախողվեց «Ազատության նավատորմիղով» Գազային մարդասիրական օգնություն տրամադրելու նախաձեռնությունը:**

Ռիելթոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<Ադամանդ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում շարունակում է <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան, ընդ. մակերեսը 83,6 ք.մ.: Հասցե՝ ք. Երեւան, Արցախի պող., 8/3 շ., բն. 23: Մեկնարկային գինը՝ 3405633 դրամ:

Աճուրդի փուլը՝ դասական եղանակներով՝ ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում, մինչեւ 30.09.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

REA.am

*Տեղեկատվության, գովազդի եւ* ***հայտարարությունների կայք***

Ամենաճանաչված ու ամենագովազդվող մասնագիտացված կայքը Հայաստանում

***Հազարավոր*** այցելուներ աշխարհի ***40 երկրներից***

1 հայտարարությունը 28 օրով արժե ընդամենը 500 դրամ, իսկ եւս 28 օր երկարացնելը՝ ***անվճար***

***Անշարժ գույքի, շարժական գույքի, աշխատանքի*** եւ ***ծառայությունների*** առաջարկի ու պահանջարկ մասին հայտարարությունները ***www.rea.am***-ում ***հայերեն, ռուսերեն կամ անգլերեն***

Այցելեք՝

***Մհեր Մկրտչյան փ. 10,***

(Հանրապետության Հրապարակի մոտ),

***երկուշաբթի-ուրբաթ ժ. 10.00-18.00***

***շաբաթ-կիրակի ժ. 12.00-16.00***

հեռ. ***56 36 57,*** էլ. հասցե՝ ***info@rea.am***




Ռիելթոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<Ադամանդ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում շարունակում է <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակելի տուն, ընդ. մակերեսը 260,8 ք.մ., տնամերձ հող., ընդ. մակերեսը 0,04636 հա,: Հասցե՝ ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, 1փ., տուն 23: Մեկնարկային գինը՝ 5360518 դրամ:

Աճուրդի փուլը՝ դասական եղանակներով՝ ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում, մինչեւ 30.09.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

Ձերմուկ առողջարանային քաղաքի կենտրոնում (Շահումյան փ. 22/1) վաճառվում է 1050 քմ հողամաս հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով: Հեռ. 093-10-05-05

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 2.06.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: